

Մ Ա Ր Յ Ի Կ ԲՍԸՄ


Մարզիկ

ՄՃԼԵ ՐԻԱՅԻՆԵ ՏՃԵՐԻՆԵ
ՏՎԵՐԻՄ ԴԵՄԵԿԵ ԱԽՄԵՆԻՄ ԲԻՐՈՒ

marzig

SPORTS MAGAZINE

ՅԻՐԴ ՏԱՐԻ, 2012, ԹԻԻ 9-10 (363-364) - VOL. XXXI N° 9-10 - ԵԿՁԵՐ ԵՎ ԵՂՁԻՐ - ԵՂՁԻՐ ԵՎ ԵՂՁԻՐ





Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՆՈՐ ՄԻԱԲՈՐԻ ՀԻՄՆԱԳԻՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՏՈՒՆԻՈՒՄ

Թղթակից ԵՐԵՒԱՆ

Հոկտեմբերի 20-ին, Մարտունու տարածաշրջանի Ջուլաքար գիւղում (Հայաստանի 5-րդ գիւղն՝ իր բնակչութեամբ) պաշտօնապէս բացուեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի հերթական տարածքային կառոյցը՝ Մարտունու միաւորը: Բացմանը ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի վարչութեան ներկայացուցիչ եղբ. Օշին Փիրումեանը, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի Ընդհանուր Խմբապետ եղբ. Ռոմանոս Պետրոսեանը, ինչպէս նաեւ միութեան Խմբապետական Խորհրդի ողջ կազմը՝ քոյրեր Լիլիթ Ջաքարեան եւ Նարէ Խլղաթեան, եղբայրներ Գէորգ Օհանեան եւ Գարիկ Քոչարեան:

Մարտունու միաւորի սկաուտների ու գայլիկների ջերմ եւ հիւրընկալ ընդունելութեանը յաջորդեց վարչականների ու Խմբապետների ողջոյնի եւ շնորհաւորանքի խօսքերը:

Ուրախալի է, որ հանդիպմանը ներկայ գտնուող տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչներն իրենց հերթին շեշտեցին պահի կարելութիւնը եւ հնարաւորութեան շրջանակներում նորաստեղծ միաւորին աջակցելու պատրաստականութիւնը:

Ընդունուած արարողակարգի համաձայն, նորաստեղծ միաւորին յանձնուեցին Հայաստանի Հանրապետութեան եւ մեր կազմակերպութեան դրօշները, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի կանոնադրութիւնը եւ սկաուտական ծրագիր-կանոնագիրը: Բացի այդ, Ընդհանուր Խմբապետը միաւորի պատասխանատուներին յանձնեց նաեւ «Ես սկաուտ եմ», «Ես գայլիկ եմ» գրքերն ու ներկայացրեց Խմբապետական Խորհրդի կողմից կազմուած եռամսեայ գործունէութեան ծրագիրը, որն այսուհետ պաշտօնապէս պետք է ի գործի դրուի նորաստեղծ միաւորում:

Յուսանք, սա մի նոր սկիզբ է հայրենիքի բոլոր անկիւններում ազգային սկաուտական շարժման տարածման ու ընդլայնման համար:

ԾԱՌԱՏՈՒՆԿ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի Երեւանի միաւորի սկաուտները Հոկտեմբերին միութեան կենտրոնական գրասենեակի շրջակայ տարածքում մասնակցեցին ծառատունկի: Վերջինս կազմակերպուել էր «Դիտա» ՍՊԸ-ի տնօրէն Տարօն Յակոբեանի եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ներկայացուցիչ Աշոտ Սանամեանի ջանքերով: Ծառատունկի համար նախատեսուած

ծառերը տրամադրել էր Տարօն Յակոբեանը: Ծառատունկին մասնակցում էին մօտ 30 սկաուտներ: Ամենափոքր մասնակիցը չորս տարեկան Արեւիկն էր, ով իր աշխուժութեամբ ու ժրաջանութեամբ


աչքի էր ընկնում անգամ սովորական անցորդների մօտ: Ծառատունկի նպատակն էր բարեկարգել շրջակայ տարածքը եւ նոր կեանք հաղորդել վաղուց մոռացուած այգուն: Այն կը գեղեցկանայ նորատունկ եասամաններով եւ վարդերով:





ԹԻՒՆԻՆ ՆԻՒԹԵՐՂ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزیک مجله ریاضية شهریه تصدیرها جمعیه المومتمن الریاضی



Մարզական ամսաթերթ
 Հրատարակություն՝ Հ.Ս.Ը.Մ.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

31 ՐԴ ՏԱՐԻ, 2012, ԹԻՒ 9-10 (363-364)



3

Հ.Ս.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Անդրադարձ 3
- Ակնարկ 9
- Մեր Տեսակցությունները 10
- Պատմություն 12
- Մասնաձիղէ Մասնաձիղ 18
- Մեր Կորուստները 35



22

ԲԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 17
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



25




32

ԽՄԲԱԳԻՐ
 Վիգեն Աւագեան
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 Սեդա Պէշլեան (Լիբանան),
 Սեւան Նազարեան (Ֆրանսա),
 Մարո Քէշիշեան (Արեւմտեան Մ.
 Նահանգներ), Յակոբ Խաչատուրեան
 (Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան
 Շահինեան (Գանատա), Ռազմիկ
 Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ
 Պատրիկ Կիւլպէնկեան, Գրիգորիս
 Պողարեան, Աբօ Մոսիկեան
 (Լիբանան), Յարութ Մատենլեան
 (Արեւմտեան Մ. Նահանգներ),
 Զարեհ Տէրվիշեան (Գանատա)

Էջադրում - Արշօ Պալեան
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
 Պուրճ Համուտ, ճինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՅՐԻՈՒՄ
 Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 4000 լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ձշդուած է 48000 լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Ս.Ը.Մ.ի Սեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$70,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



ԽՄԲՄ ԱԳՐԱԿԱՆ

ՑՈՒՑԱԿԱՆԸ ԵՒ ՀԻՄՆԱԿԱՆԸ

Ցուցականը եւ հիմնականը գործունեութեան մը երկու հակառակ երեսները կը կազմեն:

Ցուցականով մարդիկ կ'աշխատին ներգրաւել միամիտներ, ցոյց տալ անոնց թէ նախաձեռնութիւնը, որուն գլուխը կը գտնուին անոնք, հրաշալի նուաճումներ կը կատարէ:

Ամէն ինչ կեղծ, ամէն ինչ շարուած ու չափազանցուած ներկայացնելով բազմութիւնները հմայելու խաբուսիկ աշխատանք մըն է ցուցականը: Աճաբարներու կողմէ հետապնդուած միջոցն է ան, որ նպատակ ունի միշտ խաբելով, զարմացնելով ու զանգուածներու միամտութիւնը շահագործելով իրականացնել առաջադրուածը:

Ցուցականը միջակէն վար բազմութիւնները ներգրաւելու գործելակերպ մըն է:

Հակառակն է լուրջն ու հիմնականը, որ կը ձգտի լաւին, կատարեալին ու անկեղծին:

Ցուցականօրէն մարդ կրնայ խաբել իր շուրջի միամիտները, բայց երբ հաշի նստի ինքզինքին հետ, կը զգայ թէ թերիներով ու կեղծիքով լեցուն են իր ըրածները կամ յայտարարածները:

Հիմնականին համար տքնողը կը խորացնէ իր միտքը, կը մարզէ իր հոգին ու յարատեւ ճիգերով օր ըստ օրէ ձեռք կը բերէ յառաջդիմութիւն:

Բոլոր անոնք որոնք հետամուտ եղած են ցուցականին մնացած են միջակ: Միջակ ու միջակէն վար ալ մնացած են իրենց նախաձեռնութիւնները:

Ցուցականը մեր առօրեայ բարքերու մաս կազմող կեղծիքն է: Ամէն տեղ եւ ամէն մակարդակի նախաձեռնութիւններու մէջ դուք կը տեսնէք զանոնք:

Ամբոխը յաճախ անկարող ցուցական գործերու էութեան թափանցելու, ծափերով կ'ողջունէ անոնք որոնք նմանաշխատանքներու գլուխը կանգ-

նած են: Ան տեսակ-տեսակ շռայլանքներով կը պանծացնէ անոնց գործը:

Ցուցականը շարուած քարոզչութիւնն է, որ կը ներգրաւէ անձնական շահերով, հաշիւներով եւ նախաձեռնութիւններով կապուած անձերը:

Ցուցականը եղած ու ծակատագրուած է մնալու միջակ մարդոց փառասիրական ցանկութիւններուն գոհացում տուող գործելակերպ:

Անոնք որոնք ապագային կը նային կ'աշխատին հիմնականին համար:

Մեծ ու տեսական գործերը, լուրջ եւ հետք ձգող աշխատանքները կ'ենթադրեն համապատասխան պատրաստութիւն:

Սերունդը որ պիտի գայ գրաւելու այսօրուան առաջնորդներուն եւ պատասխանատուներուն աթոռները, պէտք է նետուի հիմնական եւ յոգնութիւն պահանջող աշխատանքներու մէջ: Ցուցականը եւ մակերեսայինը այժմէն պէտք է անընդունելի նկատէ եւ լծուի ուժերու լարում եւ քրտինք պահանջող ճիգերու:

Մարդկութեան մեծագոյն առաջնորդները հիմնականին համար մտածող ու կատարեալին համար տքնող կամքերու մարմնացումը եղած են:

Ցուցականով տարուած անձերու վիճակուած չէ յետնորդներու ճամբայ բանալ:

Հ.Մ.Բ.Մ.ի ստեղծումը ՀԻՄՆԱԿԱՆ առաջադրանքներու համար գործող սերունդի մը աննկուն կամքին արդիւնքը եղաւ:

Միութեան 94 տարիներու յաղթական խոյանքը աշխատանքի նոյն ոճին եւ հոգեկան տրամադրութիւններուն արդիւնքը եղաւ:

Իմաստութիւնը կը թելադրէ, որ 95-ամեակի սեմին, չմոռնանք այս ծշմարտութիւնը եւ ցուցական նախաձեռնութիւններէ հեռու, կառչինք յաջողութիւններու կատարին առաջնորդող ՀԻՄՆԱԿԱՆ առաջադրանքներու միայն:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԶԳԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՏԵՍԱՆԿԻՒՆԷ

Տոքթ. Շահե Ենիգոմշեան
(Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական
Ռազմավարական
Ծրագրի Գործադիր
Յանձնախումբին կողմէ)
ՍԱՆԹԱ ԳԼԱՐԱ



Վերջին քանի մը տասնամեակներուն արձանագրուած հիմնական երկու զարգացումներ մեծ ազդեցութիւն ունեցան մեր ներազգային կեանքին եւ ընդհանրապէս հայութեան աշխարհաքաղաքական իրավիճակին վրայ: Առաջին հերթին, եւ գլխաւորաբար, մեր հայրենիքի վերանկախացումով՝ 1991 թուականին, Հայաստանի Հանրապետութիւնը անգամ մը եւս համայն հայութեան ուշադրութեան կիզակէտը դարձաւ: Վերջին 21 տարիներուն բաւական բարեփոխումներ տեղի ունեցան Հայաստանի մէջ, սակայն, արդարօրէն կարելի է ըսել, որ պետութիւնն ու կառավարութիւնը բաւարար չափով հետամուտ չեղան ընկերային արժէքները գերադասելու աշխատանքին՝ նպաստելու համար հայկական քաղաքացիական հասարակութեան մը զարգացման:

Միւս կողմէ, վերջին չորս տասնամեակներուն, Միջին Արեւելքի կարգ մը երկիրներու մէջ տեղի ունեցող ընկերային-քաղաքական զարգացումները պատճառ եղան մեծ թիւով հայերու արտագաղթին՝ դէպի արեւմտեան երկիրներ:

Աշխարհաքաղաքական այս երկու իրադարձութիւնները պարտադրեցին, որ հայկական աւանդական Սփիւռքը դառնայ այլատեսակ: Փաստօրէն, այսօրուան հայկական Սփիւռքը կը բաղկանայ կազմակերպուած շարք մը գաղութներէ, որոնք ունին տարբեր ենթամշակույթներ: Գաղութներ, որոնք կը տառապին օր ըստ օրէ հայութեան թուաքանակի նուազումէն եւ կազմակերպուած կառույցներու բացակայութենէն:

Այս նոր իրականութիւններու դէմ յանդիման՝ հայ ժողովուրդը այսօր կը դիմագրաւէ նոր մարտահրաւէրներ: Ստեղծուած է ռուսահայ հսկայ Սփիւռք մը, որ տակաւին նոր կը սկսի կազմակերպուիլ: Միեւնոյն ատեն, արեւմտեան երկիրներու եւ, աւելի փոքր տոկոսով, Միջին Արեւելեան հայ-

կական գաղութները կը դիմագրաւեն տեղական միջավայրերու հետ համարկումի խնդիրներ: Այս բոլորին կողքին, համաշխարհայնացումը անազանգային չափերով փոխած է մեր ճանչցած աշխարհը եւ տեղեկատուական արհեստագիտութիւնը ազդած է մեր կեանքի բոլոր երեւոյթներուն, յատկապէս՝ երիտասարդութեան կեանքին վրայ: Այս բոլորին արդիւնքը կը հանդիսանայ հայ նորահաս սերունդին մօտ զոյգ ինքնութիւններու ստեղծումը. մէկը՝ հայկական, երկրորդը՝ ծննդեան կամ բնակութեան քաղաքի ինքնութիւնը:

Ասոնք ազգային լուրջ մարտահրաւէրներ են, որոնք համապատասխան քննարկումի պէտք է ենթարկուին ազգին ապագայով մտահոգ որեւէ ղեկավարութեան կողմէ: Յստակ է, որ կրաւորական մօտեցումով, ո՛չ աւանդական հասկացողութեամբ հայկական ինքնութիւն մը կարելի պիտի ըլլայ պահպանել Սփիւռքի մէջ, ո՛չ ալ լաւ քաղաքացիութիւն կարելի պիտի ըլլայ կերտել ու զարգացնել Հայաստանի մէջ: Հետեւաբար, Հ.Մ.Ը.Մ.Ի նման կազմակերպութիւն մը, որ կը ձգտի սկաուտութեան եւ մարմնակրթութեան միջոցով ազդել մեր հասարակութեան վրայ, պիտի չյաջողի իր առաքելութեան մէջ, եթէ վերադասաւորումներ եւ ռազմավարական բարեփոխումներ չկատարէ իր կառույցին եւ աշխատանքներուն մէջ:

Նկատի առնելով վերոնշեալները, Հ.Մ.Ը.Մ. Պատգամաւոր-



րական 10-րդ Ընդհանուր Ժողովին մշակուած իր ռազմավարական ծրագիրին միջոցով վերատեսուլթեան ենթարկեց իր ազգային պարտաւորութիւնները եւ նախաձեռնեց կարգ մը բարեփոխութիւններու, ջանալով ինքզինք աւելի լաւ սահմանել, իր պատկերը բարելաւել եւ ամէնէն կարեւորը՝ աւելի յարմար լուծումներ գտնել իր դիմագրաւած զանազան մարտահրաւէրներուն:

ՏՊԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՏԿԵՐԻ ԲԱՐԵԼԱՒՈՒՄ

Հ.Մ.Ը.Մ. համահայկական աշխոյժ կազմակերպութիւն մըն է Սփիւռքի եւ Հայաստանի մէջ: Կ'ակնկալուի, որ Հ.Մ.Ը.Մ.ի նման ամուր ենթակառուցցով երիտասարդական փորձառու կազմակերպութիւն մը ունենայ ազգային մակարդակի ռազմավարական համարժէք կարեւորութիւն: Իր մեծ քաշողականութեամբ եւ ոչ-քաղաքական, սակայն հայրենասիրական առաքելութեամբ, Հ.Մ.Ը.Մ. ամէնէն յարմար կազմակերպութիւնն է ոգեշնչելու եւ դաստիարակելու հայ երիտասարդներու մեծամասնութիւնը, ներառեալ՝ հայ իրականութենէն հեռու մնացողները:


Երբ խօսքը կը վերաբերի ազգային դերակատարութեան, իրականութիւնը այն է, որ Հ.Մ.Ը.Մ. պարտաւոր է բարելաւել իր պատկերը հայ ժողովուրդին մօտ: Տրամաբանութիւնը կ'ենթադրէ, որ հայկական ոչ մէկ կազմակերպութիւն կամ միութիւն գործէ դատարկութեան եւ անորոշութեան մէջ, այլ բոլորը միասին պէտք է հետապնդեն ազգային մեր վերջնական նպատակը՝ կերտել աւելի հզօր հայութիւն: Ան-

շուշտ, իւրաքանչիւր կազմակերպութիւն ունի իր գործունէութեան ծիրը եւ ծրագիրներու առաջնահերթութիւնները: Օրինակ, Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնն է կրթել պատանիները, երիտասարդները եւ ապագայ սերունդները՝ անոնց մէջ զարգացնելով աւելի լաւ արժէքներ եւ օգնելով, որ անոնք դառնան յաջող եւ յանձնառու քաղաքացիներ: Այսպիսով կ'ամրապնդուի անոնց հայկական ինքնութիւնը եւ նուիրումը հայ ազգին: Հ.Մ.Ը.Մ. սկառուութեան եւ մարմնակրթութեան միջոցով կը փորձէ հասնիլ այդ նպատակին:

Իբրեւ հաւաքականութիւն, Հ.Մ.Ը.Մ.ի ներդրումը մեր ժողովուրդի ընկերութեան եւ գաղութներու կեանքին մէջ յաճախ թերագնահատուած է: Այո, Հ.Մ.Ը.Մ. կը նկատուի սկառուութեան

եւ մարմնակրթութեան միջոցով երկարատեւ բարեկամութիւններ ստեղծող կազմակերպութիւն մը: Հ.Մ.Ը.Մ. կը նկատուի նաեւ մեր հաւաքական ուժի ցուցական լաւագոյն մեքենան՝ տողանցքներու, դրօշակի արարողութիւններու, յաջող մրցաշարքերու եւ բանակումներու ընդմէջէն: Կարգ մը երկիրներու մէջ, Ֆուլթայոյի խաղերու իր յաջողութիւնը ազգային հպարտութիւն կը ներշնչէ բոլորին: Բայց Հ.Մ.Ը.Մ.ի ազգային իսկական արժէքը կը գերազանցէ այդ բոլոր հաստատումները: Հ.Մ.Ը.Մ.ի արժէքը կը կայանայ այն փաստին մէջ, որ հայ պատանիներու եւ երիտասարդութեան նշանակալի զանգուած մը երկար տարիներով կը թրրծուի հայկական առողջ միջավայրի մէջ եւ, իբրեւ արդիւնք, անոնցմէ շատեր հետագային կը դառնան գործօն անդամներ ու ղեկավարներ հասարակական տարբեր կառույցներու եւ կազմակերպութիւններու մէջ, եւ կամ՝ կը վերածուին հայ կեանքին յանձնառու համակիրներու:

Հ.Մ.Ը.Մ. ազգային այն կարեւոր «գործարանն» է, որ փոքր տարիքէն կը պատրաստէ ու կը թրծէ ապագայի հայր: Ո՛չ մէկ կազմակերպութիւն իր թուային պատկերը ունի, եւ շատ քիչեր ունին իր քաշողականութիւնը: Ռազմավարական




տեսակէտէ այս իրականութիւնը աւելի լաւ ձեւով պէտք է գնահատուի հայութեամբ շահագրգիռ ղեկավար շրջանակներու կողմէ, որովհետեւ ատիկա եթէ ճիշդ ձեւով ընկալուի, ան դրական բացառիկ ազդեցութիւն կ'ունենայ մեր ժողովուրդի ապագային վրայ: Բայց Հ.Մ.Ը.Մ.ը ինքն է, որ պէտք է բարելաւէ իր պատկերը եւ ինքզինք պատշաճեցնէ նոր իրականութիւններուն: Հ.Մ.Ը.Մ.ը եւ իր ղեկավարները անդրադարձած են ռազմավարական այս կարեւոր դերակատարութեան եւ նկատի առնելով ազգին դէմ ցցուած նորագոյն մարտահրաւէրները՝ համոզում յայտնած են կազմակերպութիւնը բարեփոխելու նոր պահանջներու համաձայն:



ՆԵՐՔԻՆ ՄԱՐՏԱՀՐԱԻԷՐՆԵՐ

Ներքին ճակատի վրայ, Հ.Մ.Ը.Մ. նախ պէտք է վերակազմակերպէ ինքզինք՝ դառնալու համար արդիւնաւէտ, ժամանակակից եւ աւելի գրաւիչ կազմակերպութիւն մը: Ան պէտք է շեշտէ նաեւ իր առաքելութեան հիմնական սկզբունքները:

Այս երկուքը պէտք է միասին կատարուին: Ասիկա կը նշանակէ, որ Հ.Մ.Ը.Մ. պարտի գրաւել այսօրուան երիտասարդութեան ուշադրութիւնը՝ անոր մատուցելով հաճելի միջավայր, միաժամանակ հսկելով, որ երիտասարդներ դառնան հայ ազգին ծառայելու պատրաստ, պատասխանատու անձեր: Այս կը նշանակէ նաեւ, որ Հ.Մ.Ը.Մ. պիտի ողջունէ եւ քաջալերէ իր շարքերուն մէջ եղող եւ բոլոր ենթամշակութիւններու պատկանող հայերը, յատկապէս պատանի-երիտասարդներու այն



Elegance Plus

Shoes, Bags,
Fashion Accessories
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.



խատանքային մասնցումը պէտք է միշտ առնչուի օգտակար փոփոխութեան հետ:

Ինչ կը վերաբերի Հայաստանի Հանրապետութեան, անհրաժեշտ է ունենալ յստակ տարբերակ մը: Այս կը նշանակէ թէ մեր կազմակերպութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը իր սկաուտները եւ անդամները պէտք է կրթի եւ դաստիարակէ բարոյական ու ընկերային այնպիսի արժէքներով, որ իբրեւ Հայաստանի քաղաքացիներ, անոնք կարելիութիւնը ունենան դրական ազդեցութիւն ունենալու երկրի քաղաքացիական հասարակութեան եւ ժողովուրդին վրայ: Ասիկա միակ ձեւն է, որուն միջոցով Հ.Մ.Ը.Մ. կրնայ արդարացնել իր ազգային դերակատարութիւնը թէ՛ Սփիւռքի եւ թէ՛ Հայաստանի մէջ, եւ այդ է պատճառը, որ ռազմավարական կայուն ծրագրի մը մշակումը անհրաժեշտ է՝ յստակաց-

խաւը, որ այսօր դժուարութիւն ունի հայերէնով սահուն կերպով արտայայտուելու: Առաւել, ան պիտի քաջալերէ այն բոլոր հայ պատանիները եւ երիտասարդները, որոնք հայերէնով դիւրին կը հաղորդակցին եւ մաս կը կազմեն մեր ընտանիքին: Հ.Մ.Ը.Մ. հաւասարապէս պիտի մօտենայ անոնց, որոնք սահմանափակ կարողութիւն ունին հայերէնով արտայայտուելու, եւ պիտի փորձէ իրենց նոյնանման առիթ եւ դաստիարակութիւն տալ:

Անշուշտ, երբեք կասկածի տակ առնուած չէ մեր անդամներուն հաւաքական եւ անհատական միութենական յանձնառութիւնն ու նուիրումը, բայց իբրեւ կազմակերպութիւն, մենք երբեմն կը մոռնանք կեդրոնանալու արդիւնքներու վրայ: Կարելի է, որ չչփոթենք կազմակերպութեան մը առաքելութիւնը ընթացիկ գործունէութիւններու եւ ծրագրիներու հետ, որքան ալ կարելի ըլլան անոնք: Մարզական մրցաշարք մը կամ կազմակերպչական աշխատանք մը նախաքայլը կամ պարզապէս միջոցը պէտք է նկատել մեր փափաքելի արդիւնքներուն հասնելու համար եւ պէտք չէ նկատել Հ.Մ.Ը.Մ.՝ական գործունէութեան մը վերջնական նպատակը: Մեր գործունէութեան նպատակները, ծրագրիներն ու նախագիծերը պէտք է գերազանցեն ընկերային կամ նիւթական անմիջական շահերը եւ պէտք է ձգտին նուաճելու յաւելեալ գիտելիքներ, դրական վերաբերմունք եւ հաստատ արժէքներ Հ.Մ.Ը.Մ.ի անդամներուն մօտ, մասնաւորաբար՝ պատանի սկաուտներուն եւ մարզիկներուն համար: Հ.Մ.Ը.Մ. արդէն ունի միութենական արժէքներու իրեն յատուկ համակարգը, եւ սկաուտները ունին 12 գերազանց արժէքներ՝ սկաուտական դաւանանքին մէջ ամփոփուած: Մենք պէտք է յարգենք եւ գործադրենք Հ.Մ.Ը.Մ.՝ական այս արժէքները: Ասիկա չի նշանակեր, որ միութենական գործունէութիւնը հաճելի եւ զուարճալի պահեր պիտի չունենայ, այլ՝ պարզապէս շեշտը պիտի դրուի այն երեւոյթին վրայ, որ ղեկավարութեան աշ-

նելու համար մեր հետագայ ուղին եւ գործնականացնելու ծրագրուած աշխատանքներու արդիւնքը:

Նման նպատակի մը իրականացումը դժուար աշխատանք է եւ կ'ենթադրէ մեր կազմակերպութեան ընթացիկ մշակոյթին, արժէքներուն եւ գործունէութեան ձեւին փոփոխութիւնը: Ռազմավարական ծրագիրը պիտի փորձէ իրականացրնել այդ մէկը: Ծրագիրը պատրաստուեցաւ, բիւրեղացաւ եւ համաձայնութեան արժանացաւ բազմաթիւ գործօններու մանրամասն քննարկումներէ եւ արժեւորումներէ ետք, ներառեալ՝ Հ.Մ.Ը.Մ.ի աւանդութեան եւ փորձառութեան վերլուծումը, իր առաքելութեան եւ դաւանանքին վերատեսու-



ներու հետ աւելի սերտօրէն գործակցելու անհրաժեշտութիւնը:

Այս իմաստով, քննուեցան մեր ժողովուրդի ապրած աշխարհաքաղաքական փոփոխութիւնները եւ ժողովրդագրական տեղաշարժերը, ինչպէս նաեւ՝ անհաւասար թիւերով տարբեր գաղութներու պահանջները եւ անոնց մօտ աւելի ճկուն գործելու անհրաժեշտութիւնը: Կարելիութեամբ լուսարձակի տակ առնուեցան նաեւ հայերէն լեզուի գործածութեան եւ օգտագործման մարտահրաւէրները: Նաեւ՝ արծարծուեցաւ արդի արհեստագիտութեան անհրաժեշտ օգտագործումը եւ երիտասարդները ներգրաւելու նոր ձեւերու փնտռուքը: Միաժամանակ, քննարկուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի ծրագրիներուն եւ գործունէութեան լուրջ բովանդակութիւն ունենալու հարցը, դիտել տրուեցաւ փորձառու ու նուիրեալ մարդու չի նուազումը եւ շեշտուեցաւ վարչական աշխատանքներու մէջ կամաւոր ու արհեստավարժ մասնցումի անհրաժեշտութիւնը: Վերջապէս, շեշտը դրուեցաւ միութեան կառուցին առնչուող աշխատանքային նոր ձեւեր գտնելու, ինչպէս նաեւ տնտեսական ծրագրաւորումի եւ թափանցիկ հաշւապահութեան պահանջը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Համահայկական (Հայաստան-Սփիւռք) այս լայն տեսանկիւնով եւ տեսլականով է, որ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական



10-րդ Ընդհանուր ժողովը վաւերացուց եւ որդեգրեց միութեան ռազմավարական ծրագիրը: Կեդրոնական Վարչութիւնը իւրացուց, որդեգրեց բարեփոխութիւններու գաղափարը եւ նշանակեց ռազմավարական ծրագրաւորման գործադիր յանձնախումբ մը, որպէսզի առաջնորդէ բարեփոխութեան այս հորիզոնը: Խոստովանիք, որ մենք ունինք համարձակ, յաւակնոտ ծրագիր մը, բայց նաեւ նախատեսուած է, որ իրապաշտ մնանք: Ռազմավարական այս ծրագիրին յաջողութիւնը կախեալ է Հ.Մ.Ը.Մ.ի մշակոյթին՝ գործելաճիւնն ու մտայնութեան մէջ անհրաժեշտ փոփոխութիւններ կատարելու մեր կամքին եւ կարողութեանն: Յաջողութիւնը կ'երաշխատուի բոլոր մակարդակներու վրայ ճկուն եւ տքնաջան աշխատանքի լծուած ղեկավարութեան մը ընտրութիւնը: Ղեկավարութիւն մը, որ բաւարար չափով խիզախ ըլլայ, քաջ ըլլայ նախաձեռնելու, դժուար փոփոխութիւններու լծուելու եւ բաւական նուիրեալ ու յանձնառու ըլլայ գործնականացնելու իր ծրագիրը: Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ 104 մասնաճիւղերուն մէջ այս ծրագիրին բացայայտումը, ծանօթացումը, ճշմարտօրէն հաւատացողներու կամ փոփոխութեան գործիչներու զինուորագրումն ու նպատակներու առաջնահերթութեան յստակացումը մեծապէս պիտի օգնեն այս ծրագրին իրականացման:

Երբ կը նայինք դէպի մեր ազգի ապագան, Հայաստանի թէ՛ Սփիւռքի մէջ, յստակ կը դառնայ, որ մեր ճիգը պէտք է ընթանայ Հ.Մ.Ը.Մ.ի իւրայայտուկ արժէքներու վերահաստատման ուղղութեամբ՝ զարգացնել առողջ մարմին, հանրային ծառայութիւն, քաջալերել կրթութիւնը եւ ամբապնդել հայ ընտանիքը: Ճիշդ է, որ պատմականօրէն մեր միութիւնը ծառայած է այն պատանիներուն ու երիտասարդներուն, որոնք սահուն հայերէն կը խօսին, բայց այժմ ժամանակն է արդէն մեր թիրախը դարձնելու հայերէն խօսող կամ չխօսող բոլոր երիտասարդներն ու պատանիները, առանց որեւէ սահմանափակ-

ման: Պատանիներն ու երիտասարդները իրենց հայկական ինքնութեան հետ կամրջելով ու անոնց ընձեռելով դիւրութիւններ, որ ծանօթ ու առնչակից ըլլան հայկական խնդիրներու հետ, պէտք է ըլլայ մեր կարեւորագոյն կամ, աւելի ճիշդը, ամէնէն կարեւոր ազգային հեռանկարն ու նպատակը: Մարտահրաւէրը ռազմավարական վերոնշեալ նպատակներուն միջեւ հաւասարակշռութեան մը ստեղծումն է՝ այժմէական, հաճելի, գուարճալի եւ օգտակար գործունէութեամբ:



ծունեայ եւ նուիրեալ երիտասարդներու, որոնք պատշաճօրէն կրթուած են, հպարտ են իրենց հայկական ինքնութեամբ եւ ունակ են իրենց գոյգ՝ հայկական եւ ոչ-հայկական ինքնութիւններուն միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւնները կարգաւորելու՝ այդ տրեւելի առաւելութեան վերածելով: Եթէ ասիկա ազգային պատշաճ նպատակ եւ հե-

Յերիտասարդութիւնն է, որ շատ մօտիկ ապագային Հայաստանի Հանրապետութեան աջակցութեան խարխիւր պիտի հանդիսանայ: Երիտասարդութիւնն է նաեւ, որ պիտի ստանձնէ Սփիւռքի ղեկավարման դերը: Ազգային ոչ մէկ նպատակ կարելի է հետապնդել առանց հայրենասէր, աշխոյժ, գոր-

ունկար չէ, ուրեմն ի՞նչ է:
Հ.Մ.Ը.Մ. կը ծառայէ աշխարհասփիւռ հայ երիտասարդութեան պատկառելի զանգուածի մը եւ առիթը ունի ծառայելու մինչեւ այսօր հայկական իրականութենէ հեռու մնացած երիտասարդներու յաւելեալ փաղանգի մը: Ռազմավարական իր ծրագիրով Հ.Մ.Ը.Մ. պիտի փորձէ իրականացել ճիշդ ա՛յդ նպատակը:

with the complements of

Restaurant Al-Mayass

Հ.Մ.Ը.Մ.-«ԿԱՄՔ»Ի 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

ԶԱՏԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ



Վրժ-Արմեն Մոնթրեալ

Մե՞ծ է ջահի խորհուրդը: Հի՛ն է ջահի խորհուրդը:
Ան կու գայ նախամարդէն:

Ջահը լոյս է ու կրակ: Առանց լոյսի՝ մարդը առջեւը չի տեսներ, ճամբան կը կորսնցնէ, առանց կրակի՝ ջերմութենէ կը զրկուի, կեանքը կրնայ վրայ տալ:

Այս բոլորը՝ ոչ միայն Ֆիզիքական առումով, այլեւ ու մանաւանդ՝ հոգեկան:

Ի գուր չէ, որ մշակութային ու մարմնամարզական միութիւնները ջահով կը պատկերացնեն իրենց տարբերանշանները:

Ջահը վառ պահելը կեանքի շարունակականութիւնը ապահովել կը նշանակէ, իսկ վառ ջահը ձեռքին վազելը՝ լոյս ու կրակ հասցնելու, լոյս ու կրակ տեղ հասցնելու, միութիւնը փարատելու ու ջերմութիւն տարածելու խորհուրդը կը պարունակէ: Ան ողիմպիական խաղերու ծիսակատարութեան կարեւոր մէկ երեսն է. միւս երեսը՝ ջահը, դրօշարչաւի նման, ձեռքէ ձեռք անցընելով յառաջ տանիլն է, որ իրերօգնութեան, գործակցութեան գաղափարը կը խորհրդանշէ: Իսկ երբ նոյն այդ ջահին փոխանցումը կը կատարուի երէցին ձեռքէն

կրտսերին՝ ձեռքը, վերոյիշեալ բոլոր իմաստներուն վրայ կ'աւելնայ նաեւ ջահը սերունդէ սերունդ փոխանցելու յղացքը, այլ խօսքով՝ յաւերժականութեան խորհուրդը:

Այս էր անշուշտ պատգամը, որ ներկայ հասարակութեան կը հաղորդուէր Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի կողմէ Աղեքսանդրիոյ «Կամք» մարմնամարզական միութեան 100-ամեակին նուիրւած տօնակատարութեան ընթացքին, երբ աւագ ու կրտսեր սերունդներու ներկայացուցիչներ ջահը միասին կը կրէին տողանցքին ընթացքին:

Արարքը աւելիով կ'իմաստաւորուէր նաեւ անոր համար, որ հայրենի հողէն հեռու, բայց հայրենի հողին տեսիլքով ապրող մեր մեծ կամ մեծ-մեծ հայրերուն սկսած գործը, այդ ըլլայ Աղեքսանդրիա, Կ. Պոլիս, Գահիրէ թէ այլուր, հարիւր տարիէ ի վեր կը շարունակուի տակաւին այլ երկինքներու տակ՝ Մոնթրէալ, Թորոնթօ, Պոսթըն, Լոս Անճելըս, Սիտնի թէ ուրիշ տեղեր, եւ արդէն ասա հայրենի հողին վրայ, ու պիտի շարունակուի այնքան ատեն, որ ջահ վառելու ու ջահը վա՛ռ պահելու իմաստութիւնը կը կրենք մեր մէջ, ատիկա ըլլայ մարմնամարզական, մշակութային միութիւններու թէ կըրթական հաստատութիւններու ճամբով, պատանեկան-երիտասարդական միութիւններու միջոցաւ թէ այլ կառոյցներու, ու մանաւանդ՝ ազգային պետականութեան:

Այո, մեծ, շա՛տ մեծ է ջահի խորհուրդը...

«ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆԴԱՄ»ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի 10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին որոշումով, վերահաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրութիւնը: «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 300 տոլար եւ աւելի կը նուիրեն թերթին բարգաւաճման ծրագիրներուն:

«Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներ են.-

ԼԻԲԱՆԱՆԷՆ Տէր եւ տիկին Գրիգորիս Պողարեան, Նուպար Սոֆեան:

ԱՐԵԻԼԵԱՆ Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐԷՆ Պետիկ Տէր Վարդանեան:

ՅՈՐԴԱՆԱՆԷՆ ճորճ Տաքտեան

Հ.Մ.Ը.Մ.Ը ԻՆՏԻ ՍՈՐՎԵՑՈՒՑԱԾ Է ՄԻՇՏ ԿԱՏԱՐԵԼ ԼՄԲԱԳՈՅՆՍ

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՆԱԽԿԻՆ ՖՈՒԹՊՈԼԻՍՏ ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՂԲ. ԶԱԻԷՆ ԷՔՄԷՔՃԵԱՆ

Հարցազրույցը կատարեց
Րաֆֆի Սիւլահեան
ՀԱԼԷՊ

Հ. Մ.Ը.Մ.ի Հալեպի ֆութպոլի խումբի 1970-ական թուականներու աստղերէն է եղբ. Զաւէն Էքմէքճեանը, որ փոքր տարիքէն միութեան շարքերուն անդամակցած է իբրեւ գայլիկ: Ֆութպոլի հանդէպ իր ունեցած մեծ սէրը զինք մղած է կանուխէն մաս կազմելու Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի երկրորդական խումբերուն, որոնց հետ աստիճան առ աստիճան բարձրանալով հասած է մինչեւ Ա. խումբ:

Իբրեւ խաղացող, մարզական կեանքին վերջ տալէ ետք, եղբ. Զաւէն հեռու մնացած չէ Հ.Մ.Ը.Մ.էն եւ միութեան մէջ ստանձած է պատասխանատու զանազան պաշտօններ, նախ որպէս յանձնախումբի անդամ, ապա՝ վարչական ու ատենապետ:

Եղբոր աշխատանքները Հ.Մ.Ը.Մ.ով չեն սահմանափակուած: Երկար տարիներ ան ծառայած է Ազգ. Հայկազեան վարժարանին, իբրեւ հոգաբարձութեան անդամ եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղական:

Եղբոր երկարամեայ ծառայութիւններուն մօտէն ծանօթանալու համար, «Մարզիկ» հետեւեալ հարցազրույցը կատարեց հետը:



Կրնա՞ք ներկայացնել ձեր կենսագրականը եւ ըսել, թէ ի՞նչպէս սկսած են ձեր առաջին քայլերը Հ.Մ.Ը.Մ.էն ներս:
- Ծնած եմ 1956 թուականին, Հալէպ: Նախնական ուսումս



ստացած եմ Կրթասիրաց վարժարանէն ներս, ապա՝ երկրորդական կարգերը յաճախած եմ Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարան: Տասը տարեկանիս անդամակցած եմ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն, իբրեւ գայլիկ: Մարզանքի հանդէպ ունեցած սէրս պատճառ դարձած է, որ ընկերներու հետ ֆութպոլ խաղամ Ազգ. Զաւարեան վարժարանի չըջափակէն ներս, որմէ ետք ծնողքիս քաջալերանքով մաս կազմած եմ Հ.Մ.Ը.Մ.ի կրտսերներու խումբին եւ բարձրացած եմ անոր բոլոր աստիճանները:

Կը փափաքէիք ամփոփ տեղեկութիւն մը ստանալ Հ.Մ.Ը.Մ.ական ձեր կեանքին եւ վարչական գործունէութեան մասին:

- Իբրեւ գայլիկ, առաջին Աքբլաներս եղած են եղբ. Սարգիսը եւ եղբ. Մանուկ Իսկէնտէրեանը: Գայլիկական տարիքս ամբողջացնելէ ետք փոխանցուած եմ սկաուտական շարքեր եւ դարձած եմ Նոր Գիւղի «Կաքաւ» խումբի անդամ, պատասխանատու ունենալով եղբ. Միհրան Կարապետեանը: Մասնակցութիւնս բերած եմ տարեկան բանակումներու, ուր ինծի վստահուած է փոխ խոհարարի եւ ապա՝ խոհարարի պաշտօնը:

Բանակումներէն ամէնէն հետաքրքրականը եղած է վերջին բանակումս: Այդ տարի, 1974 թուականին, մեզի ընկե-

րակցեցան Դամասկոսի մասնաճիւղի եղբայրները: Այդ տարուան բանակումը, առաջին անգամ ըլլալով, գայիկները անջատաբար կատարեցին, առանց սկաուտական խումբերու բաժանումի: 1975 թուականին, մենք չորս ընկերներ դադրեցանք սկաուտական շարքերէ, օրուան պատասխանատու եղբոր հետ որոշ անհասկացողութիւն մը ունենալով: Այդ օրուանէ ծառայեցի միայն Փուլթալոյի խումբին: Ա. խումբին մէջ հետս կային բաւական լաւ խաղացողներ, որոնցմէ կը յիշեմ եղբայրներ Կարպիս Թովմասեանը, Ժանօ Պէպէճեանը, Վահէ Պաղճեանը եւ ուրիշներ: Զինուորութեանս շրջանին թէեւ Դամասկոսի մէջ կը գտնուէի, բայց միշտ ալ մասնակցութիւնս կը բերէի բոլոր մրցումներուն, նոյնիսկ հեռաւոր Տէր Զօրի մէջ կատարուածներուն:



1985 թուականին նշանակուեցայ Փուլթալոյի կեդրոնական յանձնախումբի անդամ: Նոյն տարին ինծի վստահուեցաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Ա. խումբին մարզումի պաշտօնը: 1990-1991 թուականներուն նշանակուեցայ Հ.Մ.Ը.Մ-ի ընտանեկան պարտէզի յանձնախումբի ատենապետ: 1999-2002 մաս կազմեցի Հ.Մ.Ը.Մ-ի վարչութեան, իբրեւ Փուլթալոյի յանձնախումբի հետ կապ: Մասնակցած եմ Սուրիոյ շրջանի ներկայացուցչական Շրջանային չորս ժողովներու՝ 8-րդ, 9-րդ, 10-րդ եւ 11-րդ, 1993, 1995, 1997 եւ 1999 թուականներուն:

Հ.Մ.Ը.Մ-ի կողքին ի՞նչ պաշտօններ վարած էք ազգային կեանքէն ներս:

- 1992-1997, հրաւիրուած եմ Ազգ. Հայկազեան վարժարան, իբրեւ հոգաբարձու, իսկ 2002-2009 պաշտօնավարած եմ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, իբրեւ թաղական անդամ: Հ.Մ.Ը.Մ-ը ինծի սորվեցուցած է միշտ կատարել լաւագոյնս եւ այդ մօտեցումով ալ պարտաճանաչութեամբ կատարած եմ ինծի վստահուած բոլոր պարտականութիւնները, ուր որ ալ տրուած են անոնք:

Իբրեւ վարչական, ինչպիսի՞ աշխատանքներու ձեռնարկած էք ձեր պաշտօնավարութեան շրջանին:

- Մեր շրջանի գլխաւոր աշխատանքներէն մէկը եղաւ Հ.Մ.Ը.Մ-ի Քեսապի էքիզօլուխ բանակավայրի տնակներուն ծրագրաւորումը եւ շինարարութեան իրագործումը: Օրին կազմուեցաւ յանձնախումբ մը, որուն մաս կազմեցին եղբայրներ Կարպիս Թովմասեանը, Վիգէն Գապագեանը, հանգուցեալ Շիրազ Համամճեանը եւ ես:

Այդ տարիներուն, մենք թէեւ նիւթական դժուարութիւններու հանդիպեցանք, բայց մեր կարողութեան համաձայն փորձեցինք մարզական խումբերը պահել լաւագոյն դիրքերու վրայ եւ յաջողեցանք արձանագրել յաջող արդիւնքներ, մանաւանդ՝ Փուլթալոյի եւ պասքէթի մարզաձեւերու պատասխանատուներուն հետ: Ընդհանրապէս կապի մէջ էի Ֆետերասիոնի անդամներուն եւ իրաւարարներուն հետ եւ շնորհիւ այդ սերտ կապերուն Հ.Մ.Ը.Մ-ը լաւ յարաբերութիւններ ունեցաւ բոլորին մօտ:

Ձեր շրջանին ի՞նչ էր Փուլթալոյի խումբին վիճակը:

- Խաղացող եղած շրջանիս, մեր խումբը Սուրիոյ Ա. դասակարգի խումբերու կարգին կը դասուէր եւ մեր արդիւնքները բաւական գոհացուցիչ էին: Մեր մրցակիցները ընդհանրապէս կը խուսափէին մեր դէմ խաղալէ: Յատկանշական շատ մը մրցումներ կը կատարէինք եւ ընդհանրապէս Սուրիոյ լաւագոյններէն կը նկատուէինք: 1983 թուականին էր, որ խումբը փոխանցուեցաւ Բ. դասակարգ եւ այդ օրուանէ մենք հեռու մնացած ենք Ա. դասակարգէն:

Ձեր վարչական պաշտօնավարութեան շրջանին ինչպիսի՞ դժուարութիւններու հանդիպած էք:

- Մենք միշտ փորձած ենք Հ.Մ.Ը.Մ-ի Փուլթալոյի խումբին վարկը բարձր պահել: Խաղացողներուն մէջ քիչերն էին, որոնք նիւթական կը ստանային, իսկ այսօր արհեստավարժութեան պատճառով բոլոր մարզիկները վճարովի են: Նիւթական ապահովելը մեր հիմնական մտահոգութիւններէն էր, եւ մենք շնորհիւ մեր համակիրներու ցուցաբերած օժանդակութիւններուն կը յաջողէինք յաղթահարել բոլոր դժուարութիւնները: Փորձերու յատուկ դաշտի մը պակասը մեր օրերու դժուարութիւններէն մէկն էր, որ մինչեւ այսօր կը շարունակուի:

Կրնա՞ք յիշել յատկանշական դէպք մը, որ արձանագրուած է ձեր մտապատկերին մէջ:

- 1994 թուականին, երբ Հոմսի մէջ ճակատագրական մրցում մը կը կատարէինք ոստիկանական խումբին դէմ, մենք կարիքը ունէինք հաւասարութեան կամ յաղթանակի մը: Նախքան մրցումին աւարտը, պարտուած էինք 1-0 արդիւնքով: 89-րդ վայրկեանին յաջողեցանք նշանակել հաւասարութեան կողմ եւ կարողացանք մեր տեղը ապահովել Բ. դասակարգի խումբերուն մէջ, որովհետեւ եթէ պարտուէինք՝ պիտի փոխանցուէինք Գ. դասակարգ: Կողմ նշանակած պահուն ուրախութիւնս անսահման էր, այնքան մը որ ես գետին իյնալով մարեցայ եւ խումբին բժիշկը կատարեց նախնական դարմանում: Օրին, այս դէպքը արձանագրուեցաւ Սուրիոյ թերթերուն մէջ:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱԽՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ (Բ. ՀՐԶԱՆ, 1931-1940)



1937. Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճյուղի հիմնադիր անդամներ:

Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989) ԱՆՏԻՊ, Բ. ՄԱՍ

«Շնորհաւորելի է, - կ'աւելցնէ թերթին աշխատակիցը, - Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ եւ Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, որ իր անխոնջ ջանքերով, հեռաւոր տեղերէ մէկտեղեց շրջանի լաւագոյն խաղացողները, գանազան պանդոկներու ու լաւագոյն ճաշարանի մը մէջ ապահովեց անոնց, 70 հոգիներուն, հանգիստն ու սնունդը, այսպէսով աւելի տուաւ անոնց իրարու հետ շփման մէջ մտնելով եղբայրական կապեր հաստատելու, ու նաեւ պէյրութահայութեան վաշխելու այս յիշատակելի պահերը, որոնց ի տես անոր կուրծքը հպարտութեամբ ուռեցաւ»:

Մրցումներէն ետք ու մարզիկներուն մեկնումէն առաջ, ի պատիւ հիւրերուն տեղի կ'ունենայ Շրջանային Վարչութեան կողմէ հիւրասիրութեան երեկոյթ մը, որուն ընթացքին խօսք կ'առնեն տղթ. Պէզճեան, Բաբախեան եւ ուրիշներ:

Հակառակ անոր, որ Շրջանային Վարչութիւնը որոշած ու հրահանգած էր, թէ միջ-մասնաճիւղային հանդիպումներուն տեղի պիտի ունենար նաեւ Պատգամաւորական ժողով, այդ չըլլար, որովհետեւ Փարիզէն տակաւին ստացուած էր Պատգամաւորական ժողովի աշխատանքներուն արդիւնքը:

Հ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային ախոյեանական մրցումներէն գրեթէ տասը օր ետք, Պէյրութի Ֆուլթայլի Ա. խումբը

Հալէպ կը հրաւիրուի մրցելու Սուրբոյ ախոյեան իւնիոն Սփորթիւի հետ, որ «Թէ՛ Սուրբոյ եւ թէ՛ Լիբանանի գօրաւորագոյն խումբերու հետ միշտ չափուած եւ անպարտելի անուն ձգած էր ժողովուրդին մէջ»: Այս պարագան նկատի առնելով, «Բոլորը մեծ կարեւորութիւն կու տային եւ անհամբերութեամբ կը սպասէին այս մրցումին»: Մրցումը տեղի կ'ունենայ 19 Ապրիլին: 3000-4000 «Հայ եւ օտար ազգի» հանդիսականներու ներկայութեան, որոնք փութացեր էին ականատես ըլլալու «գոյգ ախոյեաններու բախումին»:

«Ժողովուրդի ծափահարութիւններուն մէջ խումբերը դաշտ իջան... Սփորթիւի խմբագետը ծաղկեփունջ մը նուիրեց Հ.Մ.Ը.Մ.ի խմբագետին ու խաղը սկսաւ»: Առաջին քաւորը ժամուն Սփորթիւ երկու կէտ կը նշանակէ: Հայերուն մօտ տիրութիւն կը տիրէ, «Սակայն, մեր տղաքը, առանց բարոյալքուելու, անոնք պարտութեան մէջ իսկ ժպտաղէմ ու մարզիկի ոգիով շարունակեցին խաղը» ու յաջողաբար, մինչեւ առաջին կիսախաղը Հ.Մ.Ը.Մ. երեք կողմ նշանակեց հակակորդին՝ երկուքին դէմ: Այս արդիւնքին առջեւ հայ հանդիսականներուն խանդավառութիւնն ու ցնծութիւնը անընկարգրելի էր: Գլխարկներ օդին մէջ կը թռչէին, շատեր իրա-



1945. Շրջի Բուաթլիի ընտրութեան առիթով տողանցք Հալէպի մէջ:

րու կը փաթթուէին, կը համբուրուէին... Չափազանց հետաքրքրական խաղ մը եղաւ երկրորդ կիսախաղը, որուն ընթացքին հայկական խումբը ջանալով պահել իր առաւելութիւնը կը խորտակէր ու ետ կը մղէր հակառակորդ խումբին յարձակողականները»: Գնդակին արագ ու փոփոխական դիրքերով խաղը կը շարունակուի առաջին քսան վայրկեանը, երբ հակառակորդին եղած անկիւնահարուածով մը Հ.Մ.Ը.Մ. կը նշանակէ իր չորրորդ կողմ: Իրաւարարին սուլիչին հետ, հայ երիտասարդութիւնը դաշտ կը խուժէ:

Մարզիկները ուսամբարձ կը տարուին Մէպիլին մինչեւ Պապ էլ Ֆարափ, մինչեւ Հ.Մ.Ը.Մ.ի ակումբ, ուր կ'ըլլան ուղերձներ եւ մաղթանքներ: «Այս յաղթանակին աւելի, Հալէպէն պարոն մը, Պէյրութի, Դամասկոսի եւ Հալէպի մասնաճիւղերուն նուիրեց Կարմիր Խաչի երեք պայուսակներ իրենց բոլոր դեղորայքով: Պրն. Կիւլպէնկ Պէյրութի խումբը լուսանկարեց ու նուիրեց երեք պատկեր, իսկ Հալէպի համար խոստացաւ Հ.Մ.Ը.Մ.ի ակումբը երկտրականութեամբ օժտելու ծախսը» («Ազդակ», 30 Ապրիլ 1931): Այս յաղթանակը ժողովուրդին բոլոր խաւերուն համար, շաբաթներու խօսակցութեան նիւթ պիտի հայթայթէր ու նոր յաղթանակներու ճամբայ բանար:



1947. Հալէպի ախոյեան Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի խումբը: Չախէն աջ՝ Գեորգ Կրպոյեան, Վազգէն Տէր Ղուկասեան, Համազասպ Արզումանեան, Շէյխօ (Յովհաննէս), Արսէն Տէր Ղուկասեան, Յակոբ Աֆարեան, Արմէն Մարգարեան, Երուանդ Յովհաննէսեան, Ալեքսան Գիլաւճեան, Մանուկ Յովհաննէսեան, Նուպար Պոյաճեան եւ Վարուժան Երեցեան:

Լաթաքիոյ մասնաճիւղը անդամական ընդհանուր ժողովէ ետք, նամակով մը Շրջանային Վարչութեան կը դիմէ վաւերացնելու նորընտիր վարչութեան կազմը, որ կը բաղկանար հետեւեալներէ՝ Միսաք Շիրոյեան, Գրիգոր Չալուքեան, Հայկ Ղազարեան, Կարապետ Ուղուրլեան, Սիսակ Տէմիրճեան, Կարապետ Պետիկեան եւ Պետրոս Ուղուրլեան: Իսկ Պէյրութ, Շրջանային Վարչութեան ուղղուած նամակի մը մէջ կ'ըսէ. «Տեղույս Իսլամ Սփորթիւ քիւլպը նախաձեռնած է Ֆետերասիոնի մը կազմութեան եւ մեզ ալ հրաւիրած է մասնակցելու: Ֆետերասիոնին համար արդէն պատրաստուելու վրայ է ծրագիր-կանոնագիր մը, որ քաղուած պիտի ըլլայ Փրանսական եւ եգիպտական նման մարմիններու ծրագիր-կանոնագիրէն եւ յարմարեցուած տեղական պայմաններու»:

«Վարչութիւնս որեւէ անպատեհութիւն չի գտներ վերոյիշեալ մարմինին մասնակցելուն մէջ: Ընդհակառակը, կը կարծենք որ կարգ մը անհամութիւններու վերջ պիտի տրուի այս մարմինին գոյութեամբ եւ խումբերու միջեւ աւելի սերտ պիտի ըլլան յարաբերութիւնները»:

«Յիշենք նաեւ, որ Ֆետերասիոնը իրաւունք պիտի ունենայ միմիայն Ֆուլթայլի վերաբերեալ խնդիրներուն միջամտելու եւ միութեանս այլ գործերուն ոչ մէկ ձեւի միջամտութիւն պիտի ըլլայ: Եթէ դուրս ալ յարմար կը գտնէք մեր մասնակցիլը, Օննիկ Պէճճեան եւ Մայիսեան պիտի ներկայացնեն միութիւնս, մասնակցելով Ֆետերասիոնի ժողովներուն»:

Կասկածէ դուրս էր, որ նման մարմին մը անհրաժեշտութեան մը պակասը պիտի գար լրացնելու: Այլացեղ եւ այլադաւան ժողովուրդներու ֆուլթայլի խումբերը իրարու քով բերելով հանգուցելու եւ ներդաշնակցութիւն յառաջացնելու լաւագոյն միջոցն էր Ֆետերասիոնը: Անոր գոյութեան գալը հանգրուան մը պիտի կազմէր Լիբանանի մարզական կեանքին մէջ, որուն Հ.Մ.Ը.Մ. պատրէր մաս կազմելու առաջին իսկ օրէն իր ներկայացուցիչներով. ինչ որ կ'ըլլայ:

1933. Հ.Մ.Ը.Մ.ի
Հալեպի սկաուտներ
արշավի ընթացքին:



Հալեպի մէջ եւս, Հ.Մ.Ը.Մ-ը միշտ գործակցեր է լիկ-մաշի վարիչներուն հետ իր գործօն մասնակցութեամբ: 1931-ի Հալեպի լիկ-մաշի ախոյեանական Ֆուլթայոյի մրցումներուն մասնակցելու հրաւեր ստացած ըլլալով՝ Հալեպի մասնաճիւղը իր կողմէ կը դրկէ գոյգ մը ներկայացուցիչներ՝ Սուրէն Քալենտէր եւ Միհրան Կարապետեան, հետեւելու յանձնախումբին հերթական ժողովներուն: Մինչ այդ, Հալեպի մասնաճիւղի Ֆուլթայոյի խումբերը կը շարունակեն մրցիլ Թէր Սէնթ, Արարատ, Օդանաւորդ գինուորական-, Լաիք գոյճ, Համազասպ, Նուպարեան եւ այլ խումբերու հետ:

Թենիսի դաշտի նոր յանձնախումբի անդամ կը նշանակուին Միսաք Պրօբեան, Վազգէն Մուրատեան, Վազգէն Սէլեան, Նշան Թիւսիւզեան, Զարեհ Ճերահեան եւ Զաւէն Զորպաճեան: Տիգրանակերտի Հայրենակցական Միութեան խնդրանքին, իրենց մարզիչ մը յատկացնելու, կը դրկուի Անդրանիկ Գափլանեանը: Մասնաճիւղը 1931-ի Ֆուլթայոյի Ա. խումբը կը կազմէ հետեւեալներէ՝ Բիւզանդ Միսիրեան, Անդրանիկ Աթթարեան, Սարգիս Ասատուրեան, Զաւէն Զորպաճեան, Փանոս Խաչքրդեան, Վահրամ Վարժապետեան, Սարգիս Օղլանեան, Վահան Մջիկեան, Ճորճ Միսիրեան, Վաղինակ Ճենապեան: Այս խումբին համար պահեստի ոյժ նկատի կ'առնուին Կարապետ Սաթթեան եւ Անդրանիկ Գափլանեան: Մասնաճիւղին Բ. խումբին մաս կը կազմեն՝ Ռուբէն Յովանեան, Հայկ Մինասեան, Եագուպ Իշխանեան, Մկրտիչ Գափլանեան, Ս. Գասպարեան, Սուրէն Մինասեան, Վահան Թրփանճեան, Ճոն Մեսրոպեան, Արմէն Աբգարեան, Տիրան Գալազեան, Սարգիս Գաբրիէլեան, իսկ պահեստի՝ Արմենակ Գէորգեան:

Մասնաճիւղը իր նիւթական անձուկ վիճակը բարելաւելու համար, գոնէ ընթացիկ ծախսերուն բաւարարելու չափով, Ֆուլթայոյի մրցումներուն մուտքի փոքրիկ հասոյթներէ զատ, կը ձեռնարկէ ներկայացումի եւ շարժանկարի երեկոյթի:

3 Մայիս 1931-ին տեղի կ'ունենայ Հալեպի մասնաճիւղին հերթական անդամական ընդհանուր ժողովը, լսելու վարչութեան վեց ամսուան նիւթական ու

բարոյական տեղեկատուութիւնը եւ ընտրելու նոր վարչութիւն: Զեկուցաբեր Լուտեր Մասպանաճեան մանրամասն թուելէ ետք վարչութեան վեց ամսուան կեանքը, կը յիշէ որ այս շրջանին մասնաճիւղը ունեցեր է արժէքաւոր կորուստ մը՝ յանձին Բաբգէն Վահրամեանին, որ եղած է «Հին անդամներէն, Ֆուլթայոյի խմբապետ, վարչական անդամ, սկաուտ խմբապետ»: Շրջանային վարչութիւնը, Պէյրութ ու Լաթաքիա, իրենց ցաւակցութիւնը գրաւոր կը յայտնեն Հալեպի վարչութեան՝ Բաբգէն Վահրամեանին մահուան առիթով:

Անդամական այս ընդհանուր ժողովին կարելի չըլլար, ծրագիր-կանոնագրի հիմունքով, վարչական լրիւ կազմի մը ընտրութիւնը ամբողջացնել, հրաժարողներուն եւ համեմատական մնացողներուն պատճառով: Ժողովը կը կրկնուի Մայիս 17-ին, կը ըստացուի նոյն արդիւնքը, որով վերջնական ժողովով մը, որ կը կատարուի Մայիս 24-ին, կու տայ հետեւեալ արդիւնքը՝ Լուտեր Մասպանաճեան, Միհրան Կարապետեան, Մեսրոպ Երկաթունի, Նշան Թիւսիւզեան, Վահան Մջիկեան, Վազգէն Սէլեան եւ Ազատ Եսայեան:

Պէյրութի մասնաճիւղը, թենիսի յարմար դաշտի մը որոնումին ու Ֆուլթայոյի դաշտին հարթումին հետ, կը հետապնդէ Դամասկոսի, Կիպրոսի Կայծակ, Իւնիոն Սփորթիւի եւ այլ խումբերուն հետ մրցումներ կազմակերպելու խնդիրը: Ասոնց զուգահեռ ան կը զբաղի նաեւ ողիմպիականի պատրաստութեամբ, նոր կազմուելիք Ֆետերասիոնին մասնակցելու հարցով, սկաուտական հարցին Հայկ Դաւիթեանին յանձնումով: Այս բոլորէն ետք, կար գլխաւոր խնդիրը, մասնաճիւղին 200 լ. ոսկիի բացը, որուն համար բացառիկ ժողովի կը նստին տեղական ու Շրջանային վարչութեան անդամները եւ կ'որոշեն կանոնաւորել անդամավճարներու գանձումը, կազմակերպել մրցումներ՝ Ռընեսանսին եւ Ամերիկեան համալսարանին հետ, կազմակերպել վիճակահանութիւն, փութացնել ողիմպիականը, իսկ ակումբին անմիջական վճարուելիք վարձքին համար կնքել ներքին փոխառութիւն:

1933. Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական
բանակում Քեսապի մէջ:



Պէջրութի վարչութիւնը, միւս կողմէ, «Իմանալով որ Հ.Բ.Ը.Միութեան տեղւոյս Քէլէկեան Սիւուան որբանոցին մէջ կարգ մը գոյքեր աճուրդով ծախուելու վրայ են, որոնց կարգին հինգ հարիւր սկաուտական գաւազան, նոյնքան ալ սուլիչ, վարչութիւնս որոշեց տնօրէնութեան ուղղուած նամակով մը խնդրել, որ Հ.Մ.Ը.Մ-ի համար հարիւր գաւազան եւ նոյնքան մըն ալ սուլիչ նուիրեն: Նամակին մէջ պիտի շեշտուի որ մեր խնդրանքին գոհացում տալով, մեծապէս սատարած պիտի ըլլան միութեանս, որովհետեւ այդ առարկաները մեզի համար անհրաժեշտ պէտք են, բայց նիւթական միջոցներու անբաւարարութեան հետեւանք անհնարին է գանոնք գնել» (Ատենագրութիւն, 26 Մայիս 1931):

Թրիփոլի առժամեայ երեք հոգինոց վարչութիւնը իրեն վստահուած գործը՝ ներքին կարգ ու սարքի պահպանումը ոչ միայն կը տանի, այլեւ՝ ան կը մասնակցի միջ-մասնաճիւղային հանդիպումին, իր լայն մասնակցութիւնը կը բերէ, թաղականութեան հետ, կազմակերպելով նախ Ապրիլեան սգահանդէսը եւ ապա՝ տօնելով Մայիս 28-ը: Այն մեծ ճիգով կը հետապնդէ, որ հրաժարած ու դուրս մնացած անդամներ միանան Հ.Մ.Ը.Մ-ին: Այս գետնի վրայ մեծ յաջողութիւն ձեռք կը ձգէ ու իր պարտականութիւնը կատարող անհատի խղճի հանդարտութեամբ իրեն վստահուած աշխատանքը կը յանձնէ անդամական Ընդհանուր ժողովին կողմէն ընտրուած (31 Մայիս 1931) օրինական վարչութեան, որուն մաս կը կազմեն՝ Հայկազ Աթմաճեան, Իսահակ Գալայճեան, Մ. Չալեան, Ա. Չուքատարեան, Ա. Տէմիրճեան եւ Յ. Պալեան:

Շրջանային վարչութիւնը իր 9 Յունիս 1931-ի նիստին կ'որոշէ Պատգամաւորական ժողովին վերջնական թուականը ու շրջաններուն կը ղրկէ 15 Յունիս 1931 թուակիր հետեւեալ շրջաբերականը.

«Ինչպէս ծանօթ է ձեզ, անցեալին մէջ գումարուելիք մեր Բ. Պատգամաւորական ժողովը յետաձգուեցաւ մինչեւ Փարիզի Պատգամաւորական ընդհանուր ժողովին արդիւնքը,

1946. Հ.Մ.Ը.Մ-ի Գամիշլիի ֆութպոլի խումբը միջ-մասնաճիւղային 20-րդ մարզախաղերուն:



որը ամիսներէ ի վեր դեռ կը շարունակէ իր աշխատանքները եւ ըստ մեր ստացած տեղեկութիւններուն, մօտ ատենէն կը վերջացնէ իր գործերը:

«Այսքան սպասելէ յետոյ, բնականաբար, մեզի համար հարկ էր քիչ մը եւս սպասել, ստանալու համար Փարիզի ժողովին արդիւնքը: Սակայն վարչութեանս քարտուղարին մօտերս քաղաքէն մեկնելու պարագան մեզ հարկադրեց գումարելու մեր Պատգամաւորական ժողովը Յունիս 27 եւ 28, Կիրակի եւ Երկուշաբթի օրերը:

«Արդ, բոլոր մասնաճիւղերէն կը խնդրուի իրենց պատգամաւորները ղրկել որոշեալ թուականին»:

Շրջանները, տրուած հրահանգին համաձայն, կը գումարեն անդամական ընդհանուր ժողովներ՝ ընտրելու համար իրենց պատգամաւորները: Ամէն 50 անդամի մէկ, իսկ անկէ վեր, ամէն 25 անդամի համար մէկ պատգամաւոր ղրկելու հիմունքով:

Մինչ այդ, Պատգամաւորական ժողովի նախօրեակին, Շրջանային վարչութիւնը հեռաւոր Ալէքսանտրէթէն կը լսէ այնտեղ նոր մասնաճիւղի մը կազմութեան բարի լուրը, ուստի կը փութայ իր 25 Յունիս 1931 թուակիր նամակով վ. Փափագեանին գրելու.

«Ձեր Պրն. Սրապեանին ուղղած 10 Յունիս 1931 թուակիր նամակը Շրջանային վարչութեան ներկայացուած ըլլալով՝ ամենախոր հաճոյքով տեղեկացանք այդտեղ Հ.Մ.Ը.Մ-ի շարժման սկսիլը եւ տիրող եռանդուն աշխատանքը: Այս առթիւ պարտք կը ըզգանք գոհունակութեամբ արձանագրելու Ձեր ունեցած դերը այս շարժման ստեղծուելուն մէջ:

«Կը ցաւինք, սակայն, յայտնելու, թէ, ձեր պահանջներուն անմիջապէս պիտի չկարենանք գոհացում տալ, քանի որ այս շաբթու շրջանիս Պատգամաւորական ժողովին գումարումովը վարչութիւնս խիստ զբաղած վիճակ մը ունի: Պատգամաւորական ժողովէն անմիջապէս վերջ, մեզի յաջորդող Շրջանային վարչութեան պիտի թելադրենք, որ առաջին առթիւ իսկ Ձեր խնդիրը աչքի առջեւ ունենայ: Մինչ



1945. Հ.Մ.Ը.Մ-ի Յալէկի խումբը արաստճանաւորների Պէյլանի մէջ:

այդ, հաճեցէք թելադրել վարչութեան, որ դիւանը կազմէ ու վաւերացման համար Շրջանային Վարչութեան դիմէ:

«Ներփակ կը ղրկենք Հ.Մ.-Ը.Մ-ի ծրագիր-կանոնագիրէն օրինակ մը եւ այսօրուան թղթատարով՝ 100 հատ առաջարկ անդամակցութեան թուղթեր-մինչեւ ասոնց պատրաստուիլը կը ղրկենք նաեւ անդամատետրները:

Հ.Մ.-Ը.Մ-ի Սուրբիոյ եւ Լիբանանի Պատգամաւորական երկրորդ ժողովը կը գումարուի 28 Յունիս 1931-ին, Հ.Մ.-Ը.Մ-ի Պէյրուսի ահումբին մէջ:

Պատգամաւորական ժողովին իրենց ներկայացուցիչներով կը մասնակցին Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա, Թրիփոլի, Պալալէք եւ Պէյրուս:

Հալէպ, 170 անդամ, կը ներկայանայ չորս պատգամաւորով՝ Լուտեր Մասպանաճեան, Վահրամ Չոքկարեան, Ոսկան Պոյաճեան, Ռուբէն Մաւիսագալեան:

Դամասկոս, 128 անդամ, չորս պատգամաւոր՝ Յովհաննէս Պոյաճեան, Կարապետ Թորթաթեան, Աւետիս Լոչխաճեան, Բիւզանդ Միսաւետիքեան:



1933. Հ.Մ.-Ը.Մ-ի Անտիոքի եւ Հալէպի ֆութպոլի պահեստի խումբերը Անտիոքի մէջ:

Լաթաքիա, 26 անդամ, մէկ պատգամաւոր՝ Սուրէն Բաբախեան:

Թրիփոլի, 27 անդամ, մէկ պատգամաւոր՝ Հայկազ Աթմաճեան:

Պէյրուս, 160 անդամ, հինգ պատգամաւոր՝ Ալպէր Յակոբեան, Յովհաննէս Սերոբեան, Մանուկ Տէօվլէթեան, Կարապետ Պատուհասեան, Թադէոս Գարագալըագեան:

Շրջանային Վարչութիւն

մէկ իրաւասու ձայն՝ տղթ. Ա. Պէզճեան: Իրաւասու ձայնով կը մասնակցին նաեւ աթլէթի ընդհանուր խմբապետ Խորէն Սուքիասեան եւ սկաուտ ընդհանուր խմբապետ Սիմոն Թերճանեան:

Շրջանային Վարչութեան ատենապետ տղթ. Պէզճեան Պատգամաւորական երկրորդ ժողովը կը բանայ բարի գալուստի խօսքերով եւ ժողովին մաղթելով «Հ.Մ.-Ը.Մ-ի ոգիին արժանի ընթացք եւ յաջողութիւն»:

Պատգամաւորական ժողովը յաջորդաբար կը լսէ մասնաճիւղերու տեղեկագիրները:

(Շար. 2)

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY **Armavia**
Արմավիա

Photos: © Yann Arthus-Bertrand, La Terre vue du Ciel. Licence 075 960031 Studio VICKEN 2005 PARIS

Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS

Select
your Journey

Guided Tours
for 8 Days
or 12 Days

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabadoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com

ՊԱՐՍԵԼՈՆԱՅԻ «ՏՂԱՆ» ԱՆՏՐԷԱՍ ԻՆԻԵՍԹ-Ա



Գ. Թորոյեան
ՊԵՅՐՈՒԹ

Երբ 2010-ի Մոնտիայի աւարտականին Հոլանտայի դէմ 116-րդ վայրկեանին Ինիեսթա կը նշանակէր Սպանիոյ եւ մրցումին միակ յաղթական կոլը, ամէնէն աւելի ցնծացողները կը հանդիսանային «Պարսա»յի համակիրները: Այդ վայրկեանէն սկսեալ անոր նկարները կը սկսէին տեղադրուիլ Պարսելոնա քաղաքի պատերուն վրայ եւ մինչ այդ կուռքի վերածուած Մեսսիի նկարները վար կը սկսէին առնուիլ պատերէն:

Ո՞վ է Ինիեսթա:


1984-ին Պարսելոնա ծնած ու քաղաքի համանուն ակումբին մաս կազմած քաթալոն այս մարզիկը փոքր տարիքէն աչքի կը զարնէ իր գեղեցիկ ու խելացի խաղարկութեամբ: Հազիւ 18 տարեկան, ան արդէն դաշտ կը ներկայանայ «Պարսա»յի տարագով ու կը նուաճէ համակիրներու սրտերը: Ան խումբին մնայուն եւ անբաժան անդամը կը դառնայ 2005-2006 տարեշրջանէն սկսեալ ու «Պարսա»յի հզօր կազմին հետ կը նուաճէ բազմաթիւ տիտղոսներ: Կը դառնայ Սպանիոյ ախոյեան, Սպանիոյ բաժակակիր, կը տիրանայ Սպանիոյ Սուփըրքափին, կը տիրանայ «Չեմփիընզ Լիկ»ին, Եւրոպայի Սուփըրքափին, աշխարհի ակումբներու ախոյեանութեան եւ 2011-2012 տարեշրջանի «Չեմփիընզ Լիկ»ի լաւագոյն մարզիկի տիտղոսին: Այլ խօսքով, Ինիեսթա կը տիրանայ կարելի բոլոր տիտղոսներուն, որոնց համար կը պայքարի ան իր ակումբին հետ:

«Պարսա»յի տարագով Ինիեսթա կը կատարէ 477 մրցում եւ կը նշանակէ 49 կոլ: Անոր հմայիչ խաղը պատճառը կը դառնայ, որ ան հրաւիրուի ազգային խումբ, 27 Մայիս 2006-ին Ռուսիոյ դէմ կատարուած բարեկամական մրցումին: Ազգային խումբին հետ ան իր առաջին կոլը կը նշանակէ 7 Փետրուար 2007-ին, Անգլիոյ դէմ բարեկամական մրցումին ընթացքին: Յարդ, ան ազգային խումբին հետ խաղացած է 77 մրցում եւ նշանակած է 10 կոլ: Բնականաբար, ինչպէս ամէն սպանացիի, այնպէս ալ Ինիեսթայի համար, Մոնտիայի աւարտական մրցումին միակ եւ

յաղթական կոլը կը մնայ ամէնէն նշանակալիցն ու անմոռանալին անոր կեանքին մէջ: Ազգային խումբին հետ ան կը տիրանայ 2008-ի եւ 2012-ի Եւրոպայի ազգային խումբերու ախոյեանութեան եւ 2010-ի աշխարհի ախոյեանութեան: Ինիեսթա վիրաւոր ըլլալով իր մասնակցութիւնը չկարողացաւ բերել 2010-ի ցամաքամասերու ախոյեանութեան եւ Սպանիա գլխիկոր հեռացաւ այդ մրցաշարէն:

28-ամեայ այս մարզիկը իր խմբակից Չաւիի հետ կը կազմէ ամբողջական զոյգ մը թէ՛ Պարսելոնայի եւ թէ՛ Սպանիոյ ազգային խումբի միջնապահ գիծին վրայ: Անոր սորիալէներն ու գեղեցիկ փոխանցումները, որոնք յաճախ կոլի կը վերածուին, զինք վերածած են աշխարհի լաւագոյն մարզիկներէն մէկուն: Դժուար է զսպել Ինիեսթան, երբ ան գնդակով կը փորձէ ճեղքել մրցակից կազմի յետասպահ գիծը եւ մուտք կը գործէ մեծ քառակուսիէն ներս: Նմանօրինակ յարձակումները ան ու սարսափի կը մատնեն մրցակիցները: Ան մինակ չէ: Պարսայի մէջ անոր օգնութեան կը հասնին Չաւին ու Մեսսին, իսկ ազգային խումբին մէջ՝ Չաւին, Վիլլան եւ միւսները: Նման մարզիկ մը, բնականաբար, ոեւէ մարզիչ պիտի փափաքէր ունենալ իր կազմէն ներս:

Այս յաջողութիւնները պատճառ դարձան, որ ՖԻՖԱ-ն զինք նկատի ունենայ հիմնական երեք մարզիկներու շարքին, որոնք այսօր իբրեւ թեկնածու կը ներկայանան աշխարհի լաւագոյն մարզիկի տիտղոսին: Անոր մրցակիցները են՝ իրեն խմբակից արժանթինցին Լիոնէլ Մեսսին եւ իր ռիբերիմ



«թշնամին»՝ Ռէյալի փորթուգալցի Ռոնալտոն: Յառաջիկայ Յունուարին, Պրագիլի մէջ ՖԻՖԱ-ն պիտի ճշդէ, թէ այս երեք մարզիկներէն ո՞վ է արժանին: Ինիեսթա ակմբային տիտղոսներու կողքին պիտի փափաքի տիրանալ նաեւ այս տիտղոսին, ամբողջացնելու համար տիտղոսներու իր հաւաքածոն, որոնց տիրացած է ան արժանաբար:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԻ ՎԵԹԵՐԱՆՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԸ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԷՋ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐՈՒ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

ՀՄԸՄ-ի մարզական կեանքին մէջ Փուլթպոլը միշտ ալ լայն ժողովրդականութիւն վայելած է եւ կը շարունակէ վայելել: Բազմաթիւ ՀՄԸՄ-ականներ իրենց լաւ խաղարկութեամբ ակնյայտ դարձան ո՛չ միայն ՀՄԸՄ-ի եւ անոր ընդմէջէն հայկական գաղութներու մէջ, այլեւ՝ իրենց ապրած երկրի ազգային խումբերուն մաս կազմելով՝ ՀՄԸՄ-ի եւ հայութեան անունը միշտ բարձր պահեցին: Նման բազմաթիւ օրինակներ գոյութիւն ունին եւ ունեցած են նաեւ ՀՄԸՄ-ի Լիբանանի պատմութեան մէջ, եւ եթէ անոնց անուններն ու արձանագրած մարզական յաջողութիւնները փորձենք գրի առնել, ապա վստահաբար էջեր կը լեցուին:

Լիբանանի քաղաքացիական պատերազմին հետեւանքով, ինչպէս նաեւ ճակատագրի բերումով, Փուլթպոլի բազմաթիւ նման մարզիկներ հաստատուած են Գալիֆորնիոյ հեռաւոր ափերուն վրայ, ուր հակառակ իրենց յառաջացած տարիքին, մարզական կեանքէն չեն հրաժարած եւ նոյն ոգիով կապուած կը մնան իրենց պաշտելի Փուլթպոլին:

Աւելին, 1983-ին, Փուլթպոլի այդ աստղերը քով-քովի գալով հիմնած են «ՀՄԸՄ-ի Լիբանանի Փուլթպոլի վեթերաններու խումբ»ը եւ շաբաթական դրութեամբ կը շարունակեն իրենց ընկերական փորձերը:

Վերջերս, ընդառաջելով մեր սիրելի Փուլթպոլիստներու հրաւերին, այցելեցի Սրբոց Նահատակաց ՀՕՄ-ի «Աշխէն Փի-



լաւճեան» մանկամսուրին կից գտնուող մարզադաշտը, ուր անոնք կը կատարեն իրենց շաբաթական փորձերը: Հո՛ն էր խումբի հիմնադիրներէն վաստակաշատ ՀՄԸՄ-ական եղբ. Զաքար Զորպաճեանը. հոն էին նաեւ եղբայրներ Ալպէր Ունճեանը, Յարութիւն Սասունեանը եւ ուրիշներ, որոնք հիացմունքով կը հետեւէին Լիբանանի մէջ իրենց գուրգուրանքին արժանացած Փուլթպոլիստներու փորձերուն. Փուլթպոլի այն «խենթ»երուն, որոնք անցեալին իրենց յաղթանակներով ամբողջ լիբանանահայութիւնը կանգուն պահած են՝ հրպարտութեան անմոռանալի պահեր պարգեւելով անոր:

Փորձերը կը ղեկավարէր եղբ. Խաչիկ Ճիկէրճեանը, բոլորին ծանօթ «Հայաստանցի Խաչիկը», որ 1970-ականներուն Հայաստանէն Լիբանան հրաւիրուելով՝ դարձած էր տեղւոյն ՀՄԸՄ-ի Փուլթպոլի հաւաքականի աստղերէն մէկը:

Ուրախ միջնորդատի մէջ աւարտեցան փորձերը: Տղաքը իրարու հետ կատակելով, իրենց արձանագրած կոլերուն եւ գնդակի գեղեցիկ փոխանցումներուն մասին խօսելով դուրս եկան մարզա-

դաշտէն՝ ազատ ձգելով գայն արդէն իսկ անհամբեր դարձած կրտսեր ՀՄԸՄ-ականներուն: Եղբ. Ճիկէրճեան ժպտադէմ մօտեցաւ, գրպանէն հանեց հազար տոլար կանխիկ գումար մը եւ ինծի յանձնեց լսելով. «Այս համեստ գումարով կը փափաքինք մասնակից դառնալ Հայ Օգնութեան Միութեան նախաձեռնած սուրիահայերու օգնութեան հասնելու ջանքերուն»:

Մեծապէս տպաւորուած այս գեղեցիկ նախաձեռնութենէն՝ շնորհակարտեցի եւ շնորհակալութիւն յայտնեցի բոլորին: Իսկ այնուհետեւ, աւելի մօտէն ծանօթանալու համար ազգասէր այս խումբի աշխատանքներուն, հետաքրքրական խօսակցութիւն մը ունեցայ խումբին պատասխանատու եղբ. Խաչիկ Ճիկէրճեանի եւ ՀՄԸՄ-ի Փուլթպոլի անցեալի փայլուն աստղերէն եղբ. Սարգիս Նէնէճեանի հետ:

«29 տարիներու պատմութիւն մը ունի այս խումբը», ընդգծեց եղբ. Ճիկէրճեան եւ հպարտութեամբ տուաւ անունները անոր հիմնադիրներուն. եղբայրներ Աթօ Նէնէճեան, Վազգէն Գալայճեան, Սարգիս Նէնէճեան, Սարգիս Սա-

գայեան, Վարուժ Փաթրիկեան («Պոլինկ»), Մայք Թորոսեան («Միկ»), նոյնինքն Խաչիկ Ճիկէրճեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրութի այն բոլոր տղաքը, որոնք հաստատուած են Լոս Անճելըս:

Իր հիմնադրութեան յաջորդ տարին իսկ, 1984-ին, ինքնավստահ այս տղաքը Մ. Նահանգներ հրաւիրած են Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Ֆութպոլի խումբը եւ քանի մը մրցումներ կատարելով մեծ հետաքրքրութիւն ստեղծած են շրջանէն ներս:

1992-ին, խումբը հանգանակային մեծ ձեռնարկ մը կազմակերպելով կարողացած է 15 հազար տոլար յատկացրնել հերոսական Արցախին:

«Երբ լսեցինք Սուրիոյ քաղաքական տագնապը եւ հայութեան դիմադրուած դժուարութիւնները, անմիջապէս որոշեցինք 1000 տոլարով արձագանգել Հայ Օգնութեան Միութեան կոչին: Սակայն այսքանով չենք բաւարարուած: Մօտիկ ապագային լայն տարողութեամբ ձեռնարկ մը պիտի կազմակերպենք եւ հասոյթը դարձեալ ՀՕՄ-ի միջոցով պիտի տրամադրենք սուրիահայերու օժանդակութեան աշխատանքներուն», աւելցուց եղբ. Սագօ Նէնէճեան:

«Խումբը ամէն շաբաթ կը հաւաքուի եւ կիրակնօրեայ իր փորձերը կը կատարէ: Միասին ըլլալով՝ շաբթուան ծանրաբեռնուածութիւնը կը թօթափենք ու կը թեթեւանք: Ասկէ անկախ, յատուկ նպատակներով պարբերաբար ընկերային ձեռնարկներ կազմակերպելով՝ կը հաւաքուինք, անցեալի յիշատակները կը վերապրինք եւ ուրախ ժամեր կ'անցընենք», շարունակեց եղբ. Ճիկէրճեան:

Խումբին թուական պատկերին անդրադառնալով՝ ան յայտնեց, թէ ներկայիս երեսուն հոգի են, սակայն հինգ հարիւրէ աւելի համակիրներ ունին: Անմիջական ծախսերու համար շաբաթական որոշ գումար մը կը հաւաքեն: Ամսական տարեդարձներ կը նշեն եւ հիւրեր կը հիւրընկալեն: Մահ ունեցող իրենց անդամներուն կը ցաւակցին եւ ի հարկին՝ օգտակար կը հանդիսանան անոնց ընտանիքներուն:

Եղբ. Ճիկէրճեանի համար Հ.Մ.Ը.Մ-ը այն գլխաւոր կազմակերպութիւններէն



մէկն է, որ Սփիւռքի մէջ հայապահպանման մեծ աշխատանք կը տանի, եւ որուն հաւատալով է, որ վեթերաններու իրենց խումբը կը փորձէ օգտակար հանդիսանալ Հ.Մ.Ը.Մ-ի ընդհանուր աշխատանքներուն եւ յատկապէս՝ Հ.Մ.Ը.Մ-ի «Մասիս» մասնաճիւղին, որուն շրջապատէն ներս կը գործեն եւ կը զօրակցին մարզադաշտ մը ունենալու համար:

Եղբայրը ցաւով փոխանցեց, թէ խումբի հիմնադիրներէն եւ երկար ժամանակ անոր պատասխանատուութիւնը ստանձնած Հ.Մ.Ը.Մ-ի Ֆութպոլի փայլուն աստղերէն եղբ. Աբօ Նէնէճեան

անհանգստութեան պատճառով կարելիութիւն չունի միանալու խումբին:

Երբ կը պատրաստուէի հրաժեշտ տալու մեր սիրելի վեթերան մարզիկներուն, ինծի մօտեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Ֆութպոլի աստղերէն 72-ամեայ Մայք Թորոսեանը՝ բոլորին ծանօթ «Միկ»ը, եւ ցոյց տալով վեթերան իր ընկերները՝ ըսաւ. «Այս տղաքը հինէն ի վեր միշտ նպատակ ունեցած են ֆութպոլի դրօշը երիտասարդ սերունդներուն յանձնել: Անոնք յաջողած են»:

Այո՛, յաջողած են, սիրելի եղբայր: Յաջողած են, որովհետեւ համախմբուած են Հ.Մ.Ը.Մ-ի դրօշին տակ՝ այն կազմակերպութեան, որ գիտէ արժեւորել իր անդամները, ֆիզիքականին առընթեր անոնց տալով նաեւ ազգային դաստիարակութիւն՝ «Բարձրացի՛ր՝ բարձրացո՛ւր» իմաստալից իր կարգախօսով:


Բարի երթ ձեզի, սիրելի վեթերան Հ.Մ.Ը.Մ-ական ֆութպոլիստներ:

Հ.Մ.Ը.Մ.-«ԱՐԱՐԱՏ»Ի ՄԱՐԶԱՍՐԱՀԸ ԿԸ ՄԿՐՏՈՒԻ ՔՈՅՐ ՌԻՄԱ ՍԱՂՐԵԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ

Նկատի ունենալով Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ» մասնաճիւղի եւ Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան վաղամեռիկ անդամ քոյր Ռիմա Արեղի-Սաղրեանի նուիրեալ ծառայութիւնը միութեան, Կլէմտէյի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ» մասնաճիւղի կեդրոնին «Կապոյտ» մարզասրահը այսուհետեւ պիտի կոչուի քոյր Ռիմայի անունով:



Այս առիթով տեղի ունեցած յատուկ ձեռնարկի մը ընթացքին, բացումը կատարուեցաւ քոյր Ռիմայի յիշատակին պատրաստուած յուշատախտակին եւ անոր սկաուտական օրերու տարազներէն, լուսանկարներէն պատրաստուած յատուկ անկիւնին: Նաեւ յիշուեցան քրոջ իրագործումները եւ անոր անունով հաստատուած կրթանպաստը, Արեղի եւ Սաղրեան ընտանիքներու նուիրատուութիւններով գոյացած: Չեռնարկին զգացական ելոյթ մը ունեցաւ քոյր Ռիմային ամուսինը՝ Տէյվիտը: Խօսքեր արտասանեցին «Արարատ» մասնաճիւղի վարչութեան ատենապետ Հելիկ Իսաղուլեան, Կլէմտէյի քաղաքապետական խորհուրդի անդամ Բաֆֆի Մանուկեան եւ հանդիսավար Արիկ Գեորգեան:



ՍՈՒՐԻԱ ՀԱՅՈՒԹԵԱՆ
ՏԱԳՆԱԴՐ ՀԱՄԱՅՆ
ՀԱՅՈՒԹԵԱՆ
ՏԱԳՆԱԴՐՆ Է





Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵԻՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ 34-ՐԴ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

ԺՈՂՈՎԸ 3000 ՏՈՒՆԱՐ ԿԸ ՀԱՆԳԱՆԱԿԷ
Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԻԱ ՀԱՅՈՒԹԵԱՆ
ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՄԱՐՄՆԻՆ



Թղթակից ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու 34-րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովը տեղի ունեցաւ 9-11 Նոյեմբեր 2012-ին, Հ.Մ.Ը.Մ.ի «Գէորգ Անտոնեան» սրահին մէջ:

Շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի եռօրեայ բարձ-



Ժողովի դիւանի կազմը. ձախէն աջ՝ Մարո Քէշիշեան, Սիլվանա Աբուլեան, Արմէն Աբրահամեան եւ Պէթի Սկրեան:

րագոյն այս ժողովը առիթ էր քննարկելու եւ համապատասխան արժեւորումը տալու ընթացակարգի Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան: Շրջանի 17 մասնաճիւղերէն ժողովին մասնակցեցան 108 ընտրեալ ներկայացուցիչներ եւ աւելի քան 20 հրաւիրեալներ, որոնց կարգին էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Յակոբ Թիւֆէնքեան, շրջանի Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամ Անա-

հիտ Ստեփանեան, «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի տիտղոսին արժանացած քոյր-եղբայրներ եւ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան իրագոր ներկայացուցիչն էր եղբ. Վիգէն Դաւթեան:

Ժողովին բացումը կատարեց ընթացակարգի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեանը, որ բարի գալուստի խօսքէն ետք շնորհակալութիւն յայտնեց շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին եւ Շրջանային Վարչութեան, ապա գեղեցիկ անակընկալով մը, Շրջանային Վարչութեան անունով ան գնահատագիր մը յանձնեց եղբ. Սեւակ Կարապետեանին՝ բարձր գնահատելով անոր սկստական պատասխանատու աշխատանքները Հ.Մ.Ը.Մ.ի Փաստօրինայի «Ազատամարտ» մասնաճիւղէն եւ Շրջանային մարզական բաժանմունքէն ներս:

Այնուհետեւ, ան հրաւիրեց ժողովը ընտրելու իր առժամեայ դիւանը: Առժամեայ դիւանի ատենապետ ընտրուեցաւ քոյր Մարո Քէշիշեան, իսկ քարտուղար՝ քոյր Սիլվանա Աբուլեան, որոնք աւելի ուշ ստանձնեցին նաեւ մնայուն դիւանի պարտականութիւնը. անոնց իբրեւ ատենապետ միացաւ եղբ.

Արմէն Աբրահամեանը, իսկ իբրեւ քարտուղար՝ քոյր Պէթի Սկրեանը:

Լիազօրագիրներու ստուգումէն ետք ժողովը օրինակոր նկատուեցաւ եւ որոշեց խորհրդակցական ձայնով իր հրաւիրեալները, ապա ընտրեց ժողովին անհրաժեշտ քուէախոյզ, բանաձեւի եւ նախահաշիւի յանձնախումբերը:

Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան տեղեկագիրը նախապէս ղրկուած ըլլալով ներկայացուցիչներուն՝ չընթերցուեցաւ, իսկ նիւթական տեղեկագիրի ներկայացումէն ետք՝ ժողովը լսեց հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբերու գեկոյցները, որոնց յաջորդող լուսաբանական հարց ու պատասխաններէն ետք՝ ժողովը, ըստ էութեան, քննարկեց ընթացակարգի Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութիւնը: Բոլոր ելոյթ ունեցողներն ալ բարձր գնահատեցին վարչութեան գործունէութիւնը, որ հակառակ տիրող տնտեսական ծանր վիճակին, կրցած էր իրեն վստահուած պարտականութիւնները կատարել:

Շաբաթ, 10 Նոյեմբերին, ժողովականները յանձնախումբերու բաժնընեցան եւ քննեցին մասնաճիւղերէն եւ ժողովականներէն անհատաբար ներ-

կայացուած կազմակերպչական, դաստիարակչական, մարզական, սկստական, բանակավայրի, Նաւասարդեան մարզախաղերու, հանրային կապ-մամուլի, քարոզչական եւ կանոնադրային նիւթերու առնչուող առաջարկները, ապա՝ վաւերացման համար զանոնք ներկայացուցին ժողովին:

Բոլոր առաջարկները կ'առնչուէին երիտասարդութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի շուրջ համախմբելու, անոր հայեցի դաստիարակութիւն եւ առողջ մթնոլորտ ստեղծելու հրամայականին՝ զարկ տալով միջ-մասնաճիւղային, Հայրենիք-ըՄ-փիւռք սկստական եւ մարզական գործունէութիւնը զօրացնելու եւ Նաւասարդեան մարզախաղերը ընդլայնելու գաղափարներուն:



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեան:

Ժողովը անդրադարձաւ նաեւ սուրիահայութեան դիմագրուած տագնապին եւ տեղւոյն վրայ հանգանակեց 3000 տոլար գումար մը՝ զայն տրամադրելու սուրիահայութեան օժանդակութեան միացեալ մարմնին՝ հետագային բոլոր մասնաճիւղերէն ներս հանգանակելու հաստատակամութեամբ:

Կիրակի, 11 Նոյեմբերի յետմիջօրէին, Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան նախահաշիւի վաւերացումէն ետք տեղի ունեցաւ Շրջանային Վարչութեան նոր կազմի ընտրութիւնը, որ աւարտեցաւ հետեւեալ 9 քոյր-եղբայրներու ընտրութեամբ.՝ Սիլվանա Աբուլեան, Բաֆֆի Յնձայեան, Կարէն Մեսրոպեան, Մանուէլ Մարսէլեան, Վիգէն Աբելեան, Շահիկ Աղաբաբեան, Գառնիկ Աբրահամեան, Սիմա Կարապետեան եւ Ալէք Արարատեան:

Ժողովի վերջին բաժինով, Հ.Մ.Ը.Մ.ի



Ձախէն աջ՝ Ալէք Արարատեան, պարգևատրեալ Սեւակ Կարապետեան եւ Գառնիկ Արրահամեան:

հատեց նաեւ ընթացաւարտ Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութիւնը, իսկ նորընտիր Շրջանային Վարչութեան կազմին փոխանցեց իր լաւագոյն բարեմաղթութիւնները:

Ժողովի դիւանին անունով ելոյթ ունեցան զոյգ ատենապետները, որոնք շնորհաւորելով ժողովականներուն աշալուրջ մօտեցումը, առողջ քննարկումներն ու ներկայացուցած օգտաշատ առաջարկները՝ յաջողութիւն մաղթեցին անոնց ապագայ գործունէութեանց, մասնաճիւղային եւ

Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անունով շնորհաւորական ելոյթ ունեցաւ եղբ. Վիգէն Դաւթեանը, որ բարձր գնահատեց ժողովականներու ներդրումը՝ ժողովի յաջող ընթացքին: Ան գնա-

շրջանային մակարդակներու վրայ: Յատկապէս Մարո Քէշիշեան շնորհակալութիւն յայտնեց ժողովականներուն, որ առիթը ընծայեցին իրեն ըլլալու իգական սեռի առաջին ներկայացու-

ցիչը, որ կը վարէ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն ժողովը:

Եւօրեայ նստաշրջանը վերջ գտաւ Կիրակի, 11 Նոյեմբերին, կէսօրէ ետք ժամը 3-ին, Հ.Մ.Ը.Մ.ի «Յառաջ նահատակ» քայլերգով:

Երկուշաբթի, 12 Նոյեմբերի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի 34-րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովի դիւանին հրաւերով, տեղի ունեցաւ նորընտիր Շրջանային Վարչութեան առաջին ժողովը՝ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան գրասենեակէն ներս, մասնակցութեամբ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Վիգէն Դաւթեանի եւ Յակոբ Թիւֆէնքեանի: Ժողովի ընթացքին, բարեմաղթութիւններու փոխանցումներէն ետք՝ տեղի ունեցաւ դիւանի ընտրութիւն: Շրջանային Վարչութեան ատենապետ ընտրուեցաւ եղբ. Գառնիկ Արրահամեան, քարտուղար՝ եղբ. Բաֆֆի Յնծայեան, իսկ գանձապահ՝ եղբ. Ալէք Արարատեան:

ՆՈՐԸՆՏԻՐ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Երեքշաբթի, 4 Դեկտեմբերին, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու նորընտիր Շրջանային Վարչութիւնը այցելեց թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանին:

Առաջնորդ Սրբազանին կողքին, հանդիպումին ներկայ եղան Առաջնորդարանի կրօնական ժողովի ատենապետ Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Ազգային Վարչութեան դիւանը՝ Ռիմա Պօղոսեան, Ճորճ Զորպաճեան, Մհեր Տէր Յովհաննէսեան եւ Թորոս Քէչէճեան:

Ողջոյնի խօսքերէն ետք, խորհրդակցութիւնները ընդգրկեցին Հ.Մ.Ը.Մ.ի յառաջիկայ աշխատանքները՝ մարզական, սկստական եւ դաստիարակչական մարզերու մէջ, ու այս իմաստով՝ Ազգային Առաջնորդարանին հետ գործակցութեան կարելիութիւնները:

Ծանօթ է, որ յատկապէս սկստական աշխատանքներու մարզին մէջ, Առաջնորդարանը Հ.Մ.Ը.Մ.ին հետ կը կիրարկէ «Ս. Մեսրոպ Մաշտոց» սկստական շքանշանի ծրագիրը՝ ճանչցուած Մ. Նահանգներու սկստա-



կան շարժումին կողմէ: Այս աշխատանքին մէջ Հ.Մ.Ը.Մ.ը կը վստահի Առաջնորդարանի կազմած դաստիարակչական ծրագիրին: Նմանապէս, Հ.Մ.Ը.Մ.ի փափաքին համաձայն, Նոյեմբերի առաջին Կիրակին կը նշուի իբրեւ յատուկ օր՝ յիշատակելու համար միութեան ննջեցեալները: Որոշումը առաջին անգամ ըլլալով գործադրուեցաւ այս տարի ու պիտի շարունակուի յառաջիկայ տարիներուն: Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչները Առաջնորդին ու Ազգ. Վարչութեան անդամներուն ներկայացուցին այն ծրագիրները, որոնք կը միտին մասնաճիւղերը օժտելու սեփական կեդրոններով՝ զարկ տալու համար մարզական եւ սկստական աշխատանքներուն: Խորհրդակցութեան նիւթ եղան նաեւ այն մարտահրաւերները, որոնց դիմաց կը կանգնի Հ.Մ.Ը.Մ.ը, ի խնդիր նոր սերունդներու առողջ ու հայեցի դաստիարակութեան:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդը Շրջանային Վարչութեան անդամներուն նուիրեց Առաջնորդարանի նորագոյն հրատարակութիւններէն՝ Կարօ Պետրոսեանի «Հայեցի Կրթութիւն եւ Ճանապարհ» հատորէն օրինակներ:



ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ ՄԸ «ԿԱՄՔ»ՈՎ

Հ.Մ.Ը.Մ.-«ԿԱՄՔ»Ի ՅՈՒԲԵԼԵՆԱԿԱՆ ՏՕՆԱԽԱՄԲՈՒԹԻՒՆՆԵՐ ՄՈՆԹՐԷՍԱԼԻ ՄԷՋ



Գարեգին Կիրիւնլեան ՄՈՆԹՐԵԱԼ

21 Փետրուար էր, երբ սկսաւ ամէն ինչ: Եզակի հարիւրամեակի մը սեմին էինք եւ մեծ յոբելեանին վայել տօնախմբութիւն մը պէտք էր կազմակերպէինք: Չէ՞ որ ան ծնունդն էր հայ մարզական կամքին՝ իր տեսակին մէջ առաջինը՝ Սփիւռքի մէջ:

Արդարեւ, 1 Օգոստոս 1912-ին, Եզիպտոսի Աղեքսանդրիա քաղաքին մէջ կը հիմնուէր «Կամք» մարմնամարզական ակումբը, որուն հարիւրամեակը պատշաճօրէն տօնակատարելու համար, Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղը, Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան հովանաւորութեամբ, կը նախաձեռնէր տօնախմբութիւններու շարքի մը կազմակերպման: Այս նպատակին համար, մասնաճիւղը կը յառաջացնէր Աղեքսանդրիայէն Մոնթրէալ գաղթած «Կամք»ի նախ-

կին անդամներէ բաղկացած յատուկ յանձնախումբ մը, որ եօթը ամսուան նախապատրաստական աշխատանքներէ ետք կը ծրագրէր 100-ամեակի տօնախմբութիւններուն բոլոր մանրամասնութիւնները:

Տօնախմբութիւնները պիտի կատարուէին Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի տարեկան պարահանդէսի շաբաթավերջին: Այսպէս, Ուրբաթ, 26 Հոկտեմբեր 2012-ի երեկոյեան ժամը 9-էն սկսեալ, Սուրբ Յակոբ Ազգային Վարժարանի «Տիգրան եւ Տիանա Հաճէթեան» մարզասրահին մէջ տեղի պիտի ունենային 100-ամեակի հանդիսութեան բացման արարողութիւն, տողանցք եւ պասքեթպոլի բարեկամական մրցում՝ «Կամք»ի վեթերաններու եւ Հ.Մ.Ը.Մ-ի միջեւ: Շաբաթ, 27 Հոկտեմբեր 2012-ին, կէսօրուէն ըսկսեալ՝ մրցումները պիտի շարունակէին եւ հասնէին իրենց աւարտին: Իսկ երեկոյեան ժամը 8-էն սկսեալ պիտի կատարուէր պարահանդէս: Յաջորդ օր, 28 Հոկտեմբեր 2012-ին, Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ պիտի կազմակերպուէր հոգեհանգիստ՝ յաւիտ բաժնուած «Կամք»ի անդամներու յիշատակին, իսկ կէսօրէ ետք, ժամը 1-էն սկսեալ՝ ճաշ եւ հանդիսութեանց եզրափակում: Պիտի պատրաստուէր յիշատակի գրքոյկ մը, որ պիտի պարու-





Մանիշակագոյն մեր շապիկներով մարզասրահ մուտք կը գործենք: Հանդիսատեսներուն մեծ մասը ոտքի է: Իրարանցում կայ: Ոմանք բարձրաձայն կ'աղաղակեն. ուրիշներ իրենց ափերը ցաւցնելու աստիճան զօրաւոր կը ծափեն. Զգայունները կ'արտասուեն...: Կը շարունակենք քալել եւ կը հաւաքուինք դաշտին կեդրոնը: Երբ որ շեփորախումբը նուագելէ կը դադրի, զգաստութիւն մը կու գայ վրաս: Կը նայիմ չորս դիս: Աստուա՛ծ իմ, արիներու բանակ մը կայ շուրջս: Ներկայ են բոլորը. վարչականներ, խմբապետներ, սկաուտներ, արենոյշներ, արծուիկներ, գայլիկներ, մարզիկներ... բոլորը, բոլորը: Խումբը ամբողջական է, բացակայիլը մէկուն մտքէն չէ անցած: Շատ լուրջ են դէմքերը ու զգացումը: Կարծես գիտակից են եղելութեան իմաստին ու կարելորութեան, թէ որքա՛ն վաստակաւոր էր այն կազմակերպութիւնը, որուն համար տողանցեցին անոնք:

նակէր «Կամք»ի հակիրճ պատմականը, սրտի խօսքեր՝ պաշտօնական անձնաւորութիւններէ ու կազմակերպութիւններէ, վերջապէս՝ սրտաբուխ նուիրատուներու անուններ, ծանուցումներ, կազմակերպիչ յանձնախումբի անդամներու ցանկ եւ շնորհակալական խօսք: Պիտի պատրաստուէր նաեւ պատմական նկարներ պարունակող խտասալիկ մը:

Ժամանակը շուտ անցաւ:
Արագ քայլերով հասաւ սպասուած շաբաթավերջը:

100-ԱՄԵԱԿԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՏՈՂԱՆՑՔԸ

Ուրբաթ, 26 Հոկտեմբեր 2012-ի երեկոյեան ժամը 9-ին, «Կամք»ի սաներս մեծ թիւով լեցուցած ենք Սուրբ Յակոբ Ազգային Վարժարանի «Տիգրան եւ Տիանա Հանգիթեան» մարզասրահին քովի լայն տարածութիւնը, հագուած՝ մանիշակագոյն յատուկ շապիկներ, հարիւրամեակի խորհրդանշանով: Մեր մէջ էին նաեւ Թորոնթոյէն, Նիւ Եորքէն, Նիւ Ճրքիէն ու Լոս Անճելըսէն եկած եղբայրներ: Հանդիսատեսներն ու հրաւիրեալները հասած են ու մարզասրահին մէջ իրենց տեղերը գրաւած: Մենք կարգի կը շարուինք: Շեփորախումբին ետին՝ արիները, անոնցմէ ետք՝ մենք: Շեփորախումբը կը սկսի նուագել եւ խումբը կ'ուղղուի դէպի մարզասրահ: Երբ կը մօտենանք դրան սեմին, ձայն կուտայ օրուան հանդիսավար՝ ըՄ-

կաուտ. Խորհուրդի անդամ եղբ. Լեւոն Արապեան. «Յառա՛ջ եղբայրներ, օրը ձերն է»: Օրը մերն է...: Այո՛, մեզմով մարմնացած հարիւրամեայ «Կամք»ին օրն է: Այլեւս իր ձայնը անլսելի է: Մենք, բնագդաբար, անցեալի օրերէն մեր մէջ տպաւորուած համաչափ քայլերով, կը հետեւինք մեր հոգիներու խորերէն դուրս թափանցող ուրիշ ձայնի մը, որ մեզ կը խթանէ դէպի մարզասրահ... «մէ՛կ երկու՛ր, ձաա՛խ... ձաախ աա՛ջ, ձաա՛խ...»: Ու մենք կը քալենք, մեր հոգիներուն մէջ մեզի հետ տանելով ներկայութիւնը խմբապետ Վահաններուն, անգուգական մեծ կազմակերպութեան մը պատկանելութեան վեհանձն հպարտութիւնը զգալով:

Հանդիսութեան բացումը կը կատարէ Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի վարչութեան ատենապետուհի քոյր Սօսի Տայեան: Ապա, հանդիսութեան կազմակերպիչ յանձնախումբին կողմէ եղբ. Յակոբ Պուլկարեան հանդէս կու գայ «Կամք»ի հակիրճ պատմականով: Յանկարծ, դաշտի ծայրէն կ'երեւի «Կամք»ի վեթերան մարզիկ եղբ. Վարուժան Քիւփէլեանը բոցավառ ջահ մը բռնած, բոց՝ որ կարծես կու գար Միջերկրականի



ափին ծնունդ առած «Կամք»ի Ողիմպոսէն՝ Աղեքսանդրիայէն:

Հանդիսատեսներուն խանդավառութիւնը հասած է գագաթնակէտին: Վեթերան մարզիկը, դանդաղ վազքով մը, կը սկսի դառնալ դաշտին շուրջը: Անոր քայլերուն կը հետեւի պատանի մարզիկ մը: Մենք, այժմ, արիներու խումբերուն կեդրոնէն դուրս ելած՝ անոնց առջեւ, հանդիսատեսներուն դիմաց, կանգնած էինք մէկ գիծի վրայ: Երբ ջահը կը հասնի մեր գիծին ծայրը, կը յանձնուի հոն կանգնած եղբոր: Ան, իր կարգին, գայն կը յանձնէ իր քովի եղբոր: Այսպէս, ջահը ձեռքէ ձեռք անցնելով կը հասնի մեր գիծին միւս ծայրը եւ կը յանձնուի պատանի մարզիկին: «Կամք»ի ոգին է որ սերունդէ սերունդ փոխանցուելով կը յանձնուէր Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի նոր սերունդին, ապահովելու համար իր շարունակականութիւնը:

Շնորհաւորական սրտի խօսքով ելոյթ կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.-ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հայկ Ակոբեան: Այնուհետեւ, հանդիսութեան պաշտօնական մասը կ'եզրափակուի Գանատայի հայոց թեմի Առաջնորդ՝ Խաթակ Արք. Յակոբեանի սպաւորիչ խօսքերով եւ օրհնութեամբ:

ՊԱՍԲԵԹՊՈՂԻ ԱՌԱՋԻՆ ՄՐՑՈՒՄԸ

Բացման հանդիսութենէն ետք, երե-



կոն կը շարունակուի պասքեթպոլի բարեկամական մրցումով մը, «Կամք»ի վեթերաններու եւ տեղւոյն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան խումբերուն միջեւ: Խաղը վերջ կը գտնէ յայտնօրէն լաւ մարզուած Հ.Բ.Ը.Մ.-ի յաղթանակով:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐՈՒԱՆ ՄՐՑՈՒՄԵՐԸ ԵՒ 100-ԱՄԵԱԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Շաբաթ, 28 Հոկտեմբեր 2012-ի կէսօրին, տեղի ունեցաւ պասքեթպոլի բարեկամական մրցում մը՝ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի եւ Հ.Բ.Ը.Մ.-ի երէց խումբերուն միջեւ: Մրցումը այս անգամ աւար-

տեցաւ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի յաղթանակով: Տեղի ունեցան նաեւ պասքեթպոլի այլ մրցումներ՝ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի պատանեկան խումբերուն միջեւ ու, վերջապէս, գնդակի ազատ արձակման մրցում՝ «Կամք»ի վեթերաններու միջեւ:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 7.30-ին, Հայ Կեդրոնի «Ահարոնեան» սրահին մէջ տեղի ունեցած քոթէյլին յաջորդեց «Կամք»ի 100-ամեակին նուիրուած շքեղ պարահանդէսը, Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի մարգասրահին մէջ: Երեկոն կը խանդավառէին Ուաշինկթընէն յատկապէս հրաւիրուած Զարեհ Գասպարեան եւ իր նուագախումբը, նաեւ՝ ձայնի հաղորդավար Կարօն:

Պարահանդէսին բացումը կատարեց Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի վարչութեան ատենապետուհի քոյր Սօսի Տայեան: Ապա, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կէտիկեան: Եղբայրը իր խօսքին մէջ գնահատեց «Կամք»ի վաստակն ու անոր արժէքներով դաստիարակուած սերունդները: Առ այդ, ան նշեց որ այս տարեկիցքին Հ.Մ.Ը.Մ.-«Արժանեաց» շքանշանով պարգեւատրեց «Կամք»ի վաստակաշատ անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեանը: Իր խօսքին աւարտին, եղբ. Կէտիկեան բեմ հրաւիրեց եղբ. Հրաչ Տէր Սարգիսեանը:

Եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան խօսք առնելով շեշտեց, որ շքանշանը միայն իրեն չէր պատկաներ, այլ՝ իր ճամբով





կ'երթար կազմակերպութեան ու անոր բոլոր անդամներուն:

Աւելի ուշ, մտերմիկ պահի մը ընթացքին, Հայ Կեդրոնի խոհարարապետ Րաֆֆի Անտոնեան մարզասըրահ մտաւ 100-ամեակի յատուկ կարկանդակով: Զայն կտրելու համար հրաւիրուեցան «Կամք»ի երիցագոյն սկաուտն ու իր կինը՝ տէր եւ տիկին Արամ եւ Պերճուհի Մարգարեանները:

Պարահանդէսը տեւեց մինչեւ առաւօտեան փոքր ժամեր:



ներու ներկայութիւնը եկեղեցոյ մէջ: Անոնք կանգնած էին դէպի խորան առաջնորդող անցքին երկու կողմերը: Յուզիչ էր նաեւ այն պահը, երբ խումբէն երկու հոգի, անցքէն քալելով, ծաղկեպսակ մը զետեղեցին խորանին առջեւ:

Կէսօրէ ետք ժամը 1-էն սկսեալ տեղի ունեցաւ ճաշկերոյթ՝ Հայ Կեդրոնի պատէ պատ լեցուն «Ահարոնեան» սրահին մէջ: Խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հայկ Ակոբեան: Այս առիթով «Կամք»ի մասին պատմական ակնարկ մը ներկայացուց օրուան հանդիսավար

եղբ. Յակոբ Պուլկարեան: Մինչ ներկաները կը ճաշէին, պաստառի մը վրայ կը ցուցադրուէին «Կամք»ի անցեալէն ազգային հպարտանքի վկայ եղող պատմական նկարներ:

Ճաշի աւարտէն առաջ խօսքեր արտասանեցին զաղութի անցեալի ու ներկայի հոգեւոր հովիւները՝ Արմէն Ա. Քհնյ. Իշխանեանը եւ Գառնիկ Քհնյ. Գոյունեանը, որոնք բարձր գնահատեցին «Կամք»ի անդամներուն ներդրումը Մոնթրէալի հայ զաղութի կազմակերպման մէջ:

21 Փետրուար էր, երբ սկսաւ ամէն ինչ: Այսօր, ամէն ինչ արդէն դարձած է յիշատակ: Այն շաբաթավերջը, որ քովքովի բերաւ կարօտէն պարտասած քոյրերն ու եղբայրները կարծես նոր աւիշով լեցուց մեր հոգիները, նոր իմաստ տուաւ մեր կեանքին, դաստիարակելու նոր սերունդը, որպէսզի յաւերժանայ նախորդ սերունդէն մեզի փոխանցուած աւանդը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ ԵՒ ԿԷՍՕՐՈՒԱՆ ՃԱՇԸ

Կիրակի, 28 Հոկտեմբեր 2012-ի առաւօտեան, յաւարտ Սուրբ Պատարագի, Մոնթրէալի Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Եկեղեցոյ մէջ, տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն յաւէտ բաժնրւած «Կամք»ի անդամներու յիշատակին: Այդ օր, տպաւորիչ էր երկսեռ արի-

The Champs Elysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating/air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

PAVILLON MONCEAU

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38
infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

Studio MCKEN 2005 PARIS



«SIR-MADAM, WATCH YOUR STEP» ՈՒՍՈՒՅՈՂԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔ



Թղթակից
ԵՐԵՒԱՆ

Սեպտեմբերի 28-ից Հոկտեմբերի 6-ը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի չորս անդամներ մեկնեցին Ուբրան-իա՝ մասնակցելու Լվովում կազմակերպուած «Sir-Madam, Watch Your Step» ուսուցողական դասընթացին: Թեման մարդու իրաւունքների կրթութիւնն էր՝ յատուկ կարիքներով մարդկանց համատեքստում: Դասընթացը Եւրոպական Միութեան «Երիտասարդութիւնը շարժման մէջ» (Youth in Action) ծրագրի շրջանակներում էր, եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ն հանդիսանում էր գործընկեր կազմակերպութիւն: Ծրագրին մասնակցում էին քառասուն երիտասարդներ եւրոպական տասը երկրներից: Հարկ է նշել, որ մասնակիցներից ինը յատուկ

կարգիներով երիտասարդներ էին. կազմակերպիչներն հոգացել էին, որ նրանք լիարժէք ներգրաւուած լինեն ծրագրի ողջ ընթացքում: Նախնական պայմանաւորուածութեան համաձայն, թեմաներից մի քանիսը մատուցուել են հէնց մասնակիցների կողմից, ինչը լաւ առիթ էր դասընթացավարի հմտութիւնները զարգացնելու համար:



Երիտասարդներին ներկայացուել են նաեւ մարդու իրաւունքների կրթութեանը վերաբերող տարբեր ուղեցոյցներ, դերախաղեր, քննարկումներ ու բանավէճեր: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի անդամները ներկայացրել են միութեան նպատակն ու ծրագրերը, իսկ միջ-մշակութային երեկոյի ընթացքում՝ հայկական մշակոյթն ու խոհանոցը:



ԳԱՅԼԻԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ԴՊՐՈՑ-ԲԱՆԱԿՈՒՄ

Թղթակից
ԵՐԵՒԱՆ

Նոյեմբերի 23-ից 25-ը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի կենտրոնական գրասենեակում աշխոյժ

անցուղարձ էր տիրում: Գրեթէ բոլոր միաւորներից այստեղ էին հաւաքուել կազմակերպութեան կրտսեր անդամների՝ գայլիկների պատասխանատուներն ու այդ աշխատանքը առաջիկայում ստանձնելուն պատրաստակամ քոյր-եղբայրներ: Եւրոպայ դպրոց-բանակման նպատակն էր՝ համակարգել առկայ դաստիարակչական աղբիւրներն ու պատասխանատուներին փոխանցել անհրաժեշտ գիտելիքներ եւ կազմակերպչական հմտութիւններ՝ տեղերում համակարգուած ու արդիւնաւէտ գայլիկական գործունէութիւն ծաւալելու համար: Բանակման խմբապետն էր Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Աքելլա եղբ. Գէորգ Օհանեանը: Բանակմանը հրաւիրուած էին մասնագէտներ հոգեբանութեան ու մանկավարժութեան ոլորտից, ովքեր հանգամանալից ներկայացրեցին փոքրերի հետ աշխատանքի առանձնապատկութիւնները:

Ծրագրի բաւական յազեցած օրակարգը լի էր ուսուցողական վարժութիւններով եւ լատեստողական ձեւով մատուցուող նիւթերով: Բեմադրուած իրավիճակային խնդիրների միջոցով



մասնակիցներն առիթ ունեցան զգալ իրենց գալլիկի դերում՝ հասկանալով վերջիններիս բուն կարիքները սկաուտական գործունեության ընթացքում: Քաջ գիտակցելով այն հանգամանքը,

որ գալլիկությունը սկաուտական շարժման ծրարձակող արմատն է՝ պարբերաբար կ'անցկացուեն գալլիկների հետ աշխատող խմբապետ-խմբապետուհիների որակաւորման բարձրացման սե-

մինարներ եւ գործնական հմտութիւնների կատարելագործմանն ուղղուած դպրոց-բանակումներ:



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ «EXCELSCOUT 2012» ՈՒՄ

Բաւական յագեցած եւ բովանդակալից յայտագրում շեշտը դրուած էր ծրագրերի կազմման տեսական եւ գործնական հմտութիւնների վրայ: Չնայած ժամանակի սղութեանը, կազմակերպուեց եւ յաջողութեամբ անցկացուեց արշաւ: Ուշագրաւ էր ազգային երեկոն, որի ժամանակ ներկայացուեց ազգային խոհանոց, երգ ու պար:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի մասնակիցների պատրաստուածութիւնն ու ցուցաբերած աշխուժութիւնը արժանացան բարձր գնահատականի: Մասնակիցները վերադարձան հաճելի յուշերով եւ մեծ պատրաստակամութեամբ՝ ստացուած հմտութիւններն ու գիտելիքները ծրագրերի մշակման ոլորտում ներդնելու:

Թղթակից ԵՐԵՒԱՆ

Նոյեմբերի 9-14, «Եւրասիա» տարածաշրջանի սկաուտական կենտրոնում (Կրասնոկամենկա, Ուքրանիա) անցկացուեց տարածաշրջանի չափահաս անդամների (rover) վերապատրաստման «Excelscout 2012» «Ծրագրի՛ր քո ուղին, խաղա՛ քո խաղը» խորագրով դասընթաց, որի նպատակն էր պատրաստել ազգային մակարդակում գործող երիտասարդների, ովքեր պէտք է աշխատեն երէցական ծրագրերի ուղղութեամբ: Մասնակցում էին ազգային սկաուտական ինը կազմակերպութիւններ:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը ներկայացնում էր 3 հոգանոց պատւիրակութիւն՝ եղբ. Հայկ Կարապետեան, քոյրեր Աննա Ասատրեան եւ Լենա Հայրապետեան: Ներկայ էր նաեւ քոյր Նարէ Խլղաթեանը, ով հրաւիրուել էր որպէս երիտասարդ փորձագէտ:



ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԻ ՏՈՂԱՆՑՔԻՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆ



Թղթակից ԱԹԵՆՔ

Կիրակի, 28 Հոկտեմբերին, Հ.Մ.Ը.Մ-ի Գոթինիոյ մասնաճիւղը անգամ մը եւս մասնակցեցաւ Յունաստանի ազգային սօնին՝ Հոկտեմբեր 28-ի առիթով Նիքէայի քաղաքապետարանին կողմէ կազմակերպուած տօնակատարութեան, դափնեպսակի գետեղման եւ տողանցքին:

Նախորդ տարիներու նման, այս տարուան տողանցքն ալ կատարուեցաւ Նիքէայի Օսի ա Քսենիի կեդրոնական պողոտային վրայ: Տողանցքին Հ.Մ.Ը.Մ-ի Գոթինիոյ մասնաճիւղը մասնակցեցաւ լրիւ կազմով, մոկլի-գայլիկ վոճմակներէն սկսեալ, մինչեւ սկաուտներ, երէցներ, աստիճանաւորներ, թմբկահարներ եւ Սկաուտ Խորհուրդի քոյրեր, ընդհանուր թիւ՝ 80 հոգի:

Տողանցքէն առաջ տեղի ունեցաւ դափնեպսակներու գետեղում, ուր Հ.Մ.Ը.Մ-ի անունով դափնեպսակ մը գետեղեց Շրջանային սկաուտ ճիւղի խմբա-

պետ եղբ. Սերգօ Մովսէսեան:

Տողանցքէն ետք, սկաուտական կազմը հասաւ «Չաւարեան» դաշտ, ուր շարուեցան բոլոր խմբաւորումները եւ կատարուեցաւ դրօշակներու մուտք, ծնողներու եւ հայրենակիցներու ներկայութեան:

Օրուան պատգամը փոխանցեց մասնաճիւղի խմբապետ եղբ. Գրիգոր Չաքմաքճեան: Հ.Մ.Ը.Մ-ի Գոթինիոյ վարչութեան ատենապետուհի քոյր Ռիթա Յակոբեան իր խօսքին մէջ շնորհաւորեց սկաուտական շարքերը՝ իրենց ներկայութեան համար: Խօսք տրուեցաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային Սկաուտ Խորհուրդի ատենապետ եղբ. Յարութիւն Մանուկեանին, որ ոգեւորիչ արտայայտութիւններով արդիւնաւէտ տարեշրջան մը մաղթեց բոլոր սկաուտներուն: Իր կարգին, ան շնորհաւորեց մասնաճիւղին աստիճանաւորական կազմը, որ կարողացաւ 10 օրուան մէջ հաւաքել իր անդամները եւ տողանցել 80 հոգիով:

Դրօշակներու ելքով եւ խումբերու կանչերով փակուեցաւ օրուան հանդիսութիւնը:

Հ.Մ.Ը.Մ-Ի ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցնող շաբաթներուն, անդամական իրենց ընդհանուր ժողովները գումարեցին եւ նոր վարչութիւնները ընտրեցին Հ.Մ.Ը.Մ-ի Ալմելոյի, Լոնտոնի եւ Փարիզի մասնաճիւղերը:

Ստորեւ նորընտիր կազմերը:

Հ.Մ.Ը.Մ. ԱԼՄԵԼՕ

Եղբ. Սարգիս Տէր Ղազարեան- ատենապետ

Եղբ. Օհաննէս Օհաննէսեան- ատենադպիր

Եղբ. Ապան Ապանեան- գանձապահ

Եղբայրներ Բաֆֆի Ամիրխանեան, Գեորգ Օհանեան, Մասիս Պողոսեան եւ Սիփան Խաչատուրեան- խորհրդականներ

Հ.Մ.Ը.Մ. ԼՈՆՏՈՆ

Եղբ. Էտմոնտ Աբրահամեան- ատենապետ

Եղբ. Ալէք Խաչատրեան- փոխ ատենապետ

Քոյր Մելինէ ճէյքոբ- ատենադպիր

Եղբ. Շիրազ Վարդանեան- հաշուապահ

Եղբ. Պետրոս Մարտիրոսեան- սկաուտական

Քոյր Ալին Աբրահամեան- տընտեսական

Քոյր Էտրիան Խաչատրեան- մարզական

Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍ

Եղբ. Անդրանիկ Պահարեան- ատենապետ

Եղբ. Անտրէ Տատայեան- ատենադպիր

Քոյր Այտա Խանճեան- գանձապահ

Եղբ. Նազօ Նաճարեան- հաշուապահ

Եղբայրներ Լեւոն Պաղտասարեան, Արամ Սիսեռեան, Ժոզէֆ Պետիկեան, Աբօ Վեգիլեան եւ Ալպէր Մահպուլպեան- խորհրդականներ



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ



Թղթակից ԱՆԹԻԼԻԱՍ

Չորեքշաբթի, 21 նոյեմբեր 2012-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի պասքեթպոլի յանձնախումբը կազմակերպեց ճաշկերոյթ-պարահանդէս մը՝ ժիպէյլի «Օշըն պլու» ճաշարանին մէջ: Զեռնարկին ներկայ գտնուեցան պաշտօնական հիւրեր, Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի պասքեթպոլի աղջկանց խումբին հովանաւոր «Քոնթինենթըլ» հաստատութեան ներկայացուցիչը, Անթիլիասի քաղաքապետական խորհուրդի ներկայացուցիչը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի ընտանիքը:

Այս առիթով տեղի ունեցաւ մասնաճիւղին 2012-2013 տարեշրջանի պասքեթպոլի աղջկանց խումբին ներկայացուցիչներու, ներկայութեամբ մասնաճիւղի ատենապետ եղբ. Իշխան Եղիայեանի, Լիբանանի պասքեթպոլի ֆետերասիոնին մօտ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչ եղբ. Եղիա Սրապոնեանի եւ Ասիոյ ֆետերասիոնի ընդհանուր քարտուղար եղբ. Յակոբ Խաչերեանի:

Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի 2012-2013 տարեշրջանի աղջկանց պասքեթպոլի խումբին մաս կը կազմեն՝ Ալիք Թապազեան-Մարտիկեան, Սանտրա Նաթրմ, Նաթալի Սվաճեան, Լայլա Ֆարէս, Սուլա Աբրամեան, Քրիստին Մուֆարէժ, Նայրի Ոսկերիչեան, Լուպնա Ապտալլա, Մեղրի Թորոսեան, Եասմին Արապ, Մակի Զաքարեան, Ռայա Ֆարահ, Բալիկ Սէմէրճեան, Նաթալի Իթանի, Սարին Սվաճեան, Քաթրին Հաթ եւ Լարա Գրաճեան: Խումբին գլխաւոր մարզիչն է Ճորճ Աբիբի, մարմնակրթ-

թութեան մարզիչը՝ Ֆուատ ժըրժէս, բժիշկը՝ տոքթ. Ճոնի Իպրահիմ, վիճակագրութիւններու պատասխանատուն՝ Ժոէլ Ապտէլնուր:

Ճաշկերոյթին ընթացքին հայերէն եւ արաբերէն բարի գալուստի խօսքեր արտասանեցին մասնաճիւղի պասքեթպոլի յանձնախումբի անդամ քոյր Մարալ Գուլաճեան եւ վարչութեան մօտ պասքեթպոլի ներկայացուցիչ եղբ. Յակոբ Ճերէնեան: Խանդավառ երգերով ելոյթ ունեցաւ երգիչ Արարատ Ահարոնեան: Ապա, հիւրաբար բեմ բարձրացաւ հանրածանօթ երգիչ Ատիա Հարմանտեան, որ քանի մը երգերով մթնոլորտը ա՛լ աւելի խանդավառեց: Ճաշկերոյթին վերջին բաժինով, ազգային-յեղափոխական երգերու մեկնաբան Գառնիկ Սարգիսեան օրուան մթնոլորտը հասցուց իր զազաթնակէտին:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ



Թղթակից ԱՆԹԻԼԻԱՍ

Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ եւ մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին ու իմբապետական կազմին կազմակերպութեամբ, Կիրակի, 21 Հոկտեմբեր 2012-ին տեղի ունեցաւ սկաուտական նոր տարեշրջանի բացման հանդիսութիւն:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շեփորախումբին առաջնորդութեամբ, 200 տարագաւորներ տողանցեցին Համազգայինի Մեյլանթոն եւ Հայկ Արսլանեան ձեմարանէն դէպի «Աղբալ-

եան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային կեդրոն, ուր բացօթեայ դաշտին մէջ տեղի ունեցաւ դրօշակի պաշտօնական արարողութիւն:

Հրաւիրեալներու շարքին էին Պսալիմ-Մրգհեր-Մաթգուպ շրջաններու քաղաքապետ ժորժ Մրգհեր եւ փոխ քաղաքապետ Լեւոն Տէր Սարգիսեան, Անթիլիաս-Նաքբաշի քաղաքապետութեան անդամ Հայկ Ոսկերիչեան, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Վաչէ Նաճարեան, Լիբանանի Շրջանային Սկսուտական Խորհուրդի ներկայացուցիչներ, Շրջանային խմբապետութիւնը, շրջանի պատկան մարմիններու ներկայացուցիչներ, ծնողներ, համակիրներ եւ Հ.Մ.Ը.Մ-ի բարեկամներու հոծ բազմութիւն մը:



Ցարիններ կատարեցին իրենց երգման արարողութիւնը եւ Ցարենոյններ ստացան Բ. կարգ: Տեղի ունեցաւ խմբապետական կազմի աստիճանատուչութիւն հետեւեալ ձեւով՝ Դայար Մխիթարեան (խմբապետ), Լոուի Ժամկոչեան (աքեյլ), Լոուի Ծառուկեան (փոխ խմբապետ), Սթիւ Պալեան (փոխ խմբապետ), Կարին Կէօքճեան (պալու) եւ Մարլինա Քէշիշեան (պաղիրա):

Ապա ներկայացուեցաւ գեղարուեստական յայտագիր մը, որ նուիրուած էր հայ սկսուտութեան 100-ամեակին: Յայտագիրը կ'ընդգրկէր թատերական ներկայացում մը, որուն ղէպքերը տեղի կ'ունենային 2037 թուականին՝ հայ սկսուտութեան հիմնադրութեան 125-ամեակին, եւ որուն ընդմէջէն օրուան խմբապետները կը յիշէին մասնաճիւղին մէջ իրենց ապրած օրերն ու յիշատակները, մասնաւորապէս, 2012 թուականի վերամուտի աշխատանքները: Այսպիսով, մոկլիները երգեցին մոկլիին երգը, պարմանուհիները պարեցին հայկականը ու եւրոպականը միախառնող պար մը, գայլիկները, արծուիկներն ու մոկլիները կենդանի պատկերով մը ամբողջ դաշտին տարածքը օգտագործելով՝ գրեցին «100-ամ-

եակ», արենոյնները պարեցին սկսուտական շարժումներով պար մը, արինները ներկայացուցին չարքաշութեան կենդանի պատկեր մը, բուրգ մը եւ թատերական ներկայացումներ:

Յայտագիրը փակուեցաւ մասնաճիւղային կանչով մը, որուն մասնակցեցան սկսուտական բոլոր խումբերը: Հարկ է նշել, թէ յայտագրի ընթացքին ցուցադրուեցան քանի մը տեսերիզներ, որոնցմէ մէկը կը ներկայացնէր մասնաճիւղին աշխատանքները, իսկ միւս երկուքը ձայնագրուած էին Լիբանանէն գաղթած մասնաճիւղի նախկին խմբապետներուն կողմէ, որոնք իրենց սրտի խօսքն ու հաճելի դրուագները կը փոխանցէին ներկաներուն:

Ձեռնարկին ընթացքին ներկաներուն բաժնուեցան ձեռային աշխատանքներ՝ պատրաստուած տարազաւորներու կողմէ: Ձեռային աշխատանքը կը բաղկանար չորս ձեռքերէ՝ միացած իրարու. անոնցմէ իւրաքանչիւրը կը ներկայացնէր սկսուտական չորս ճիւղերէն մէկը՝ մոկլի, գայլիկ-արծուիկ, արի-արենոյն եւ երէց-պարմանուհի: Ձեռքերուն վրայ գրուած էր մասնաճիւղի նոր տարեշրջանի աշխատանքներուն նշանաբանը՝ «Դէպի յառաջ»:

Հ.Մ.Ը.Մ-Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՄԲԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԻՋ-ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՄԸ

Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային խմբապետութեան միջ-խմբապետական զարգացման մրցումը տեղի ունեցաւ Կիրակի, 28 Հոկտեմբերին, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի, Այնճա-

րի, Ժրտէյտէի, Պէյրութի, Պուրճ Համուտի եւ Ճիւնիի խմբապետական կազմերուն, որոնք երեք ժամուան ընթացքին գիտելիքներու իրենց պաշարը ըստուգեցին՝ մրցակցութեան հաճելի ու խանդավառ մթնոլորտի մը մէջ:

Զարգացման մրցումին առաջին հանդիսացաւ Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի խմբապետական կազմը, երկրորդ՝ Պէյրութի, իսկ երրորդ՝ Պուրճ Համուտի

խմբապետական կազմերը:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՅԱՅՏԱԳԻՐ

Մասնաճիւղերու սկսուտական հետաքրքրական եւ օրինակելի յայտագիրներուն թափ տալու համար, Լիբանանի Շրջանային խմբապետութիւնը Հոկտեմբեր, Նոյեմբեր եւ Դեկտեմբեր ամիսներուն նախաձեռնած է «Մասնա-



Հ.Մ.Ը.Մ. Ի ԱՅՆՃԱՐԻ ՇԵՓՈՐԱԽՈՒՄԻՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՌԱՇԱՅԱՅԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

Թղթակից ԱՅՆՃԱՐ

Ճիւղային օր»երու, որոնց ընթացքին ան պիտի այցելէ մասնաճիւղերը եւ տեղւոյն խմբապետական կազմերուն հետ պիտի գործադրէ սկաուտական օրինակելի յայտագիրներ:



Նախաձեռնութեան առաջին աշխատանքը տեղի ունեցաւ Կիրակի, 28 Հոկտեմբերին, Ճիւղային մէջ: Շրջանային խմբապետական կազմը մասնաճիւղի խմբապետներուն հետ գործադրեց սկաուտական հետաքրքրական յայտագիր մը՝ սկաուտական բոլոր ճիւղերուն համար: Յայտագիրը մեծ խանդավառութիւն ստեղծեց մասնաճիւղին մօտ:

Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի շեփորախումբը անգամ մը եւս բարձր պահեց Այնճարի եւ լիբանանահայութեան անունը՝ ընդառաջելով ժապալ Շէյխի քաղաքապետութիւններու համադաշնակցութեան հրաւերին, ներկայ գտնուելով Լիբանանի անկախութեան տարեդարձի տօնակատարութեան, Ռաշայայի մէջ:

Տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 21 Նոյեմբեր 2012-ի առաւօտեան ժամը 10-ին, Ռաշայայի հրապարակին վրայ, ներկայութեամբ Լիբանանի նախագահին ներկայացուցիչին եւ պաշտօնական այլ հիւրերու:

Դրօշակի արարողութեան հետ, տօնակատարութեան պաշտօնական բացումը կատարեց լիբանանեան բանակի շեփորախումբը, ապա՝ Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի շեփորախումբը նուազեց լիբանանեան քայլերգը:

Պաշտօնական հանդիսութենէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի շեփորախումբին առաջնորդութեամբ, ներկաները ուղղուեցան դէպի Ռաշայայի բերդ, ուրկէ 69 տարիներ առաջ ծնունդ առած էր Լիբանանի անկախութիւնը:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am



www.europehotel.am

ԵՂԲ. ՎԱՐԴԳԷՍ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Յակոբ Բէշիշեան
ՊԵՅՐՈՒԹ

Եղբ. Յովհաննէս Ծատուրեանի մահէն ճիշդ երեք ամիս ետք, Երկուշաբթի, 24 Սեպտեմբեր 2012-ին, Ծատուրեան գերդաստանը, Հ.Մ.-Լ.Մ.-ի Լիբանանի ընտանիքը եւ լիբանանեան հեծելարչաւը ունեցան մեծ կորուստ մը, երբ Հ.Մ.-Լ.Մ.-ական եղբ. Վարդգէս Ծատուրեան անվերադարձ բաժնուեցաւ մեզմէ, իր ետին ձգելով յուզում եւ վիշտ իր ընտանիքին, հարազատներուն ու իր շրջանակի բոլոր եղբայրներուն ու բարեկամներուն:

Եղբայր Վարդգէս Հ.Մ.-Լ.Մ.-ին անդամակցած է 1957-ին, իբրեւ հեծիկի մարզիկ: Ան եղած է Հ.Մ.-Լ.Մ.-ի եւ Լիբանանի ազգային խումբի մարզիկ, մարզիչ, հեծիկի յանձնախումբի ատենապետ, Հ.Մ.-Լ.Մ.-ի Պէյրութի մասնաճիւղի վարչական, ինչպէս նաեւ՝ Լիբանանի հեծելարչաւի Ֆետերասիոնի անդամ:

Եղբայր Վարդգէս եղած է օրինակելի եւ տիպար մարզիկ, լուռ ու մունջ սեւ աշխատանք տանող մարզիչ ու վարչական, սակայն՝ խիզախօրէն կարծիքները արտայայտող ժողովական:


1960-ական թուականներուն, եղբ. Վարդգէս մաս կազմած է Հ.Մ.-Լ.Մ.-ի հեծելարչաւի այն խումբին, որ հաստատած է մրցանիշ մը, երբ Հ.Մ.-Լ.Մ. յաջորդական հինգ տարիներ շահած է Լիբանանի հեծելարչաւի խմբային ախոյեանութիւնը՝ 1961-1965: Մրցանիշ մը, որ ցարդ կը գոյատեւէ:

Եղբայր Վարդգէս բազմիցս հանդէս եղած է Լիբանանի ազգային խումբին հետ, իր մասնակցութիւնը բերելով հեծելարչաւի միջազգային շարք մը մրցաշարքերու: 1959-ին ան մասնակցած է Միջերկրականեան խաղերուն, 1963-ին՝ Իտալիոյ Նափոլի քաղաքին մէջ տեղի ունեցած միջազգային մրցաշարքին, իսկ 1966-ին՝ Թայլէնտի միջազգային մրցաշարքին եւ ասիական խաղերուն:

Վերջին անգամ ան հեծելարչաւի մրցաշարք մը շահած է 1972-ին, երբ արդէն ամուսնացած էր եւ ունէր երեք զաւակ:

Իբրեւ մարզիկ եւ մարզիչ իր արձանագրած փայլուն արդիւնքներէն ետք, եղբայր Վարդգէս կը նուիրուի վարչական գործունէութեան՝ Հ.Մ.-Լ.Մ.-ի եւ Լիբանանի հեծելարչաւի ֆետերասիոնին մէջ:

1980-ական թուականներուն ան կը հետեւի մարզիչներու



Ծատուրեան
եղբայրներ:

պատրաստութեան դասընթացքներու՝ հռչակաւոր Կիսո Քոսթայի հսկողութեամբ:

Եղբ. Վարդգէս հաւատարմով, որ հայ մարզիկին լաւագոյն դարբնոցը հայ դպրոցն է, եղած է ԼԵՎԱՄ-ի հիմնադիր անդամներէն մէկը՝ տարիներ շարունակ վարելով Հ.Մ.-Լ.Մ.-ի ԼԵՎԱՄ-ի յանձնախումբին ատենապետութեան պաշտօնը:

Հ.Մ.-Լ.Մ.-ի շարքերուն մէջ իր ունեցած բեղուն գործունէութեան իբրեւ գնահատանք, Հ.Մ.-Լ.Մ.-ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը 2008-ին զայն պարգեւատրած է միութեան «Ծառայութեան» շքանշանով:

Եղբ. Վարդգէս Ծատուրեանի մահով հեծելարչաւի աշխարհին մէջ Հ.Մ.-Լ.Մ.-ական հերոսի մը պատմութիւնն է, որ կ'աւարտի: Ան մեկնեցաւ առանձին ձգելով մեզ ու սուգի մատնելով Լիբանանի հեծելարչաւի մարզը ընդհանրապէս ու իր ընտանեկան պարագաները, հարազատները, բարեկամներն ու իր պատկանած միութիւնը մասնաւորապէս:

Սիրելի՛ եղբայր Վարդգէս,

Դո՛ւն, որ եղար տիպար մարզիկ եւ միութենական գործունեայ անդամ՝ ըլլայ միութեանդ, ըլլայ Լիբանանի հեծելարչաւի ֆետերասիոնին մէջ ու գացիր միանալու քու տարիներու անբաժան գործակից եղբօրդ՝ Յովհաննէսին, համոզուած ես ու քաջ գիտես, որ աւանդը փոխանցուած է ապահով ձեռքերու, որոնք կը քալեն ձեր ուղիով, հաւատքով ու տեսիլքով, այն քաջ համոզումով, որ երթը պիտի շարունակուի:

Վարձքդ կատար սիրելի՛ եղբայր:

Հողը թեթեւ գայ վրագ:

ԾԱՌ-ԱՅԱՍԷՐ ԵՒ ԱՌ-ԱԶՆՈՐԴՈՂ ՎԱՐԴԳԷՍԸ

**Ուստիի Ապտել Նուր
Լիբանանի
հեծելարչաւի ֆետերասիոնի
նախկին ընդհանուր քարտուղար
ՊԵՅՐՈՒԹ**



վարչական գործեր, պաշտօններ...: Յովհաննէս, յետոյ՝ Վարդգէս, ապա իր գաւակները՝ Հրաչ եւ Վաչէ: Ի՞նչպէս բնութագրել Վարդգէսը եւ անոր աշխատանքը թէ՛ ֆետերասիոնին եւ թէ՛ իր սիրած ակումբին՝ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ: Հեծելանորդներու եւ ախոյեաններու մարզիչը, ազգային խումբերու մարզիչը, տափարակ ճամբաներու վրայ թէ լեռնային վայրերու, Մարոքի մէջ, Թայլենտի եւ Քամպուտիոյ ճամբաներուն վրայ թէ այլուր՝ հասնելով մինչեւ հեռաւոր երկիրներ, ապա վերադառնալով Լիբանան՝ հիմը դնելու ԼԵՎԱՄ-ին:

Ճակատագիրը երբեմն իր դաժան օրէնքները կը բանեցնէ մեր վրայ, նոյնիսկ եթէ պարտադրուած ենք ենթարկուելու... Աստուծոյ կամքն է: Քանի մը ամիս առաջ հրաժեշտ տուինք մեր սիրելի Յովհաննէսին, եւ այսօր մենք մեզ կը գտնենք նոյն դժուար կացութեան մէջ, խօսիլ նորէն շատ սիրելի կորուստի մը մասին՝ Վարդգէս Ծատուրեանի: Կարծես ան շատ կանուխ կարօտցաւ իր եղբայրը եւ նախընտրեց միանալ իր կողակիցին ու իր գաւակներուն մօր՝ Լուսինին, ու երթալ հոն, ուր ո՛չ ցաւ կայ, ո՛չ ալ տխրութիւն:

Վարդգէս Ծատուրեան, քեզ ճանչցայ իբրեւ հեծելարչաւի սիրահար եւ այդպէս ալ մնացիր մինչեւ կեանքիդ վերջը: Լիբանանի մէջ Ծատուրեան ընտանիքը հեծելարչաւի ընտանիքն է՝ տասնեակ տարիներէ ի վեր: Մրցումներ, ախոյեանական տիտղոսներ, պատասխանատուութիւններ, թեքնիք եւ

Վարդգէ՛ս, դուն վագեցիր ծառայութիւն մատուցելով բոլորին՝ անտեսելով տարիքդ: Եղար առաջնորդող ու քաջալերող, երկու յատկանիշներ, որոնք քեզ կերտեցին, եւ դուն դարձար դաստիարակը քեզ սիրողներուն:

Սիրելի՛ Վարդգէս, կը խնդրենք Աստուծոյն, որ արժանի ըլլաս յաւիտեանական կեանքին:

Մեր միակ մխիթարութիւնը քու ժառանգած ընտանիքդ է: Վստահ եղիր, որ անիկա վառ պիտի պահէ քու յիշատակդ, արժանի դարձնէ քու կտակդ:

Հաւատալով յարութեան գաղափարին:

ԵՂԲ. ՅԱՐՈՒԹ ՔԱՀՔԷՃԵԱՆԻ ԿՈՐՈՒՍՏԸ



**Րաֆֆի Սիլահեան
ՀԱԼԷՊ**

26 Հոկտեմբեր 2012-ին, Քահքէճեան ընտանիքը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ ընտանիքը խոր կակիծով գուժեցին միութեան վաստակաւոր նախկին մարզիկներէն,

Ֆուլթայոլիստ եղբ. Յարութ Ը.Մ.ի Ֆուլթայոլի խումբերուն: 1958-ին, Քահքէճեանի՝ «Էսկէր Արթին»-ի մահը:

Եղբ. Յարութ ծնած է Հալէպ, 1938

թուականին: Փոքր տարիքին անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերուն, իբրեւ գայլիկ: Ֆուլթայոլը յատուկ հետաքրքրութիւն ստեղծելով, պատանի տարիքէն ան մաս կազմած է Հ.Մ.



իբրեւ բերդապահ, անդամակցած է միութեան «Համագասպ» Ֆուլթայոլի խումբին: Տարի մը ետք, մաս կազմած Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթայոլի Ա. խումբին: 1970 թուականին, իբրեւ խաղացող, Ֆուլթայոլէն դադարելէ ետք, աւելի քան տասը տարիներ ան ստանձնած է խումբին կարմիր խաչի պարտականութիւնը: 1980-էն ետք,



երկար տարիներ ան մաս կազմած է շրջանի ֆուտբոլի յանձնախումբերուն եւ եղած է կիշէի յանձնախումբի անդամ:

Եղբ. Յարութ իր հեզ ու համեստ բնավորութեամբ եղած է միութեան անսակարկ ծառայող անդամներէն մէկը: Ծանօթ էր իր ներողամիտ սրտով: Ան կը քաջալերէր նոր սերունդը՝ անդամակցելու միութեան մարզական եւ սկսու-
















ական խումբերուն: Անոր ծառայութիւնը չսահմանափակուեցաւ միայն Հ.Մ.Ը.Մ.ի մարզական խումբերով, այլ՝ ստանձնեց նաեւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ դպրաց դասի ֆուտբոլի խումբին մարզումի պաշտօնը:


Թող հողը թեթեւ գայ վրադ եղբ. Յարութ:



1965-ի ՍՈՒՐԻՈՅ ԱԽՈՅԵԱՆ
Հ.Մ.Ը.Մ.-ի ՖՈՒԹԳՈՒԼԻ ԽՈՒՄԲԸ



 Արշակ Պահարեան	 Սուրեն Երեցեան	 Յարութիւն Բախչեճեան	 Սահակ Երոյեան	 Երբեմ Մեղոսեան
 Վագգէն Ծապաշչօրեան	 Արշակիկ Սիկիւքճեան	 Վահի Պետրոսեան	 Սորիս Ֆակս	 Սելո Բեօշկեան
 Գեորգ Ալընեան	 Գօգօ Քիլեճեան	 Գօգօ Սեւոպեան	 Սամիր Ֆակս	 Ծորճ Ռասկելեճեան



'Made from one single slice
of natural Australian opal'



Classique
OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia

Phone: +61 2 9290 2199


fax: +61 2 9262 1630

Website: www.classiquewatches.com

Email: Info@classiquewatches.com

ԶԱՂԱՅՔ

Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան
ՊԵՅՐՈՒԹ



Արմտիքները աղալու գործիքը կը կոչուի «Ջաղացք», գործիքին գտնուող տեղը՝ նոյնպէս:

Մարդիկ երբ հողագործութեամբ զբաղիլ սկսան, իրենց մշակած արմտիքները մաքրել ու աղալ ուղեցին եւ նախնական ջաղացքներ շինեցին: Առաջին ջաղացքը նման էր սանդին (հաւան), որուն մէջ ցորենը կը լեցընէին եւ քարէ թակով կը ծեծէին:

Եգիպտացիները ալիւրը կ'աղային երկու տափակ քարերու մէջ: Երկու հոգի դէմ դիմաց կանգնած այս քարերը հակառակ ուղղութեամբ կը դարձնէին: Յետոյ, հոռմէացիները այս ջաղացքին տակի քարը դարձուցին եւ աշխատողներուն թիւը մէկի իջեցուցին:

Այսպէս, նախնական ջաղացքները կը գործէին մարդկային ուժով եւ շատ յոգնեցուցիչ կ'ըլլային: Երբ տարիները յառաջացան, մարդիկ սկսան

բնութեան ուժերէն օգտուիլ: Շինեցին հովի ուժով, նաեւ՝ ջուրերու հոսքին ուժով աշխատող ջաղացքներ: Մեր օրերէն չորս հազար տարի առաջ շինուած այս ջաղացքները շատ գործածական եղան: Սակայն, ամէն եղանակի կը փոխուէր հովին եւ ջուրին ընթացքը: Այս պատճառով մարդիկ ջաղացքին մօտ կը հսկէին եւ աղօրիքին անիւր կեդրոնէն կը դարձնէին հովին կամ ջուրին ուղղութեամբ: Հոլանտացիները հարիւրաւոր տարիներ առաջ շինեցին հսկայ հողմաղացքներ, որոնք այսօր երկրին յատկանիշները դարձած են:

19-րդ դարուն, ջաղացքները սկսան բանիլ «շոգեշարժ» մեքենաներով, իսկ 20-րդ դարուն՝ ելեկտրաշարժ մեքենաներով:


Մեր օրերուն, արդիական ջաղացքները գործարաններու մէջ ինքնագործ կը բանին: Ցորենը կճեփէն եւ քիստէն կը զատեն, հողերէ եւ փոշիներէ կը մաքրեն, յետոյ աղալով մաքուր ալիւրի կը վերածեն: Աղացած մաքուր ալիւրը կը լեցուի տոպրակներու մէջ ու կը վաճառուի շուկան:



Ցորենը մէկ տարի ապրող խոտաբոյս մըն է: Ան տարածուած է աշխարհի բոլոր ցամաքամասերուն մէջ: Ծանօթ է ցորենի վայրի եւ մշակովի 25 տեսակ: Ան մշակուած հնագոյն բոյսն է: Մարդիկ ցորենը սկսած են մշակել Ք.Ա. եօթը հազար թուականէն ի վեր:

Ցորենը կ'օգտագործուի հացի, ձաւարի եւ մաքարոնի արտադրութիւններու մէջ: Անկէ կը ստանան բարձրորակ ալբու, օսլայ եւ սոսինձ: Ծղոտը կ'օգտագործուի որպէս ցամքար եւ անասնակեր, ինչպէս նաեւ՝ թուղթի արտադրութեան մէջ:





Ընտանի կատուները կամ պարզապէս կատուները (լատիներէն՝ Felis catus) ընտանի, մսակեր կաթնասուններ են: Անոնք կը պատկանին կատուազգիներու ընտանիքին:



ԿԱՏՈՒՆԵՐԸ



Կատուները ընտելացուած են շուրջ հինգ հազար տարի առաջ: Մարդիկ անոնց ընտելացած են, որպէսզի ազատին մուկերէն: Ծանօթ է կատուներու մօտ ութսուն ցեղ՝ պարսկական կատու, Վանայ կատու, սիպիրեան կատու, սիամեան կատու, Անգորայի կատու եւ այլն:

Ընտանի կատուներն ալ, ինչպէս իրենց վայրի ցեղակիցները (եղէզնակատու, վագր, լուսան, յովազ եւ այլն), որսի կ'ելլեն մթնշաղին եւ

զիչերը: Ընտանի կատուները մաքրասէր են:

Կատուները կը հիւանդանան վարակիչ հիւանդութիւններով, ինչպէս օրինակ՝ կատաղութիւն, քոս եւ այլն, անոր համար ալ կատուներու հետ խաղալու ժամանակ պէտք է զգուշ ըլլալ եւ ձեռքերը անպայման լուալ:

Կատուները երբ խնամքի պակաս ունենան՝ վայրի կը դառնան:



ՀԱՆԵԼՈՒԿ


Ո՞վ է, ի՞նչ է:
Հող կը մտնէ,
կը մահանայ,
Յետոյ նորէն
կեանք կ'առնէ:

Աչքը յառած երկնքին,
Կը տարածուի, կը շատնայ:
(Պատասխանը՝ յաջորդիւ: Նախորդ թիւին պատասխանն էր լուսին):


ԿԱՏՈՒՆԵՐԸ ՀԻՆ ԵԳԻՊՏԱՅԻՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Հին եգիպտացիները կ'երկրպագէին կատուները, զանոնք նկատելով «սուրբ» կենդանիներ: Իրենց աստուածուհիներէն Փաշթին անոնք կը պատկերէին կատուի գլուխով: Եգիպտացիները կը հաւատային, որ իրենց աստուածուհին ինը կեանք ունի: Այստեղէն ալ կու գայ այն հաւատալիքը, թէ կատուները ինը կեանք ունին: Երբ կատուն կը սատկէր, տէրը որպէս սուգի նշան կը սափրէր յօնքերը: Կատուն կը զմուսէին եւ կը թաղէին այնպէս ինչպէս մարդը:

Հին եգիպտացիները կը հաւատային նաեւ, որ վհուկները կը թաքնուին կատուներու սեւ դիմակին տակ: Այդ պատճառով ալ սեւ կատուի հանդիպիլը կը նկատուէր չարաբախտ նշան:



Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

ՍՈՒՏՈՔՈՒ

	3			1	7		2
		9	6				
5				3			8
9	1				6	7	
			4	9	6		
	8	3				4	9
	5			1			8
				3	9		
3		8	7				1

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

Նախորդին լուծումը

5	4	7	6	8	9	2	3	1
6	2	8	5	3	1	7	4	9
3	1	9	7	4	2	6	5	8
4	6	1	3	2	7	8	9	5
7	9	2	1	5	8	3	6	4
8	3	5	4	9	6	1	2	7
2	7	4	8	6	5	9	1	3
1	5	6	9	7	3	4	8	2
9	8	3	2	1	4	5	7	6

Պատասխանը՝ յաջորդիւ


ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- Գերմանիոյ ֆուլթպոլի կազմերէն:
- Յորդանոս - Մանրատերեւ թմբի:
- Գոռեխ, պիծակ - Յապաւուած՝ արաբական պետութիւն:
- Իգական օտար անուն - Ողորկ դառնալ:
- Կրկնուած ձայնաւորներ - Որկրամոլ-Նախան-ձիլ:
- Իրերայաջորդ գիրեր - Կրկնուած բաղաձայններ:
- Պոլսահայ մեծատուններու տրուած տիտղոս - Մոհամէտի փեսան - Կոնաբեր ծառ:
- Մահակ - Ողիմպիական դրօշին՝ Ամերիկան խորհրդանշող օղակը:
- Ճիտական պատասխան - Ճափոնական օղանաւային ընկերութիւն մը - Չայնագուրկ՝ որձ - Ինք:
- Ֆուլթպոլի միջազգային կազմակերպութիւնը - Իգական օտար անուն - Արական օտար անուն:
- Առարկայ - Եւրոպական հանրապետութիւն:
- Այբուբենէն - Եւրոպական թագաւորութիւն - Մոյթ:
- Շրջագիծ - Հոլովակերտ մասնիկ - Սէուտական քաղաք:
- Ժամանակի միաւոր - Արական օտար անուն - Քերուանի աւաններէն:
- Մրմունջ - Մառերու որթ - Օտար՝ պետ:
- Արդարեւ - Ճոկան - Արամբի - Հին ձեւով՝ իգական «նա»:
- Յուցական ածական - Եռանդ - Դրկից տառեր:
- Մէկը - Անգլիական տիտղոս - Քաղցած:
- Կենդանական սեռ - Առաջնորդ, ռահվիրայ:
- Շուշմայի իւղ - Ջրային տարածք:


ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

- Պոլսոյ երբեմնի նշանաւոր տաճարը - Չգեստի մաս - Յամառ չորքոտանի:
- Սպասէ՛ (հակ.) - Չորցուած պտուղ - Կապոց - Ուրուական:
- Հացի բորբոս - Կողմ - Ունք:
- Պիելոուուս թենիսիստը - Արական օտար անուն:
- Թմրանիւթ մը - Սիամանթոյի ծննդավայրը - Որոշուած գին:
- Կենդանիներու խումբ - «Ֆորմիլա 1»-ի գերմանացի մրցավարորդ:
- Բազմութիւն - Չինկախառն պղինձ - Օրականով աշխատող գործաւոր:
- Շաղել - Ջրային փոխադրամիջոց - Իգական օտար անուն:
- Ուղղեակ - Իգական օտար անուն - Չետեղել:
- Կիսաչոր ծիրան - Երկսայրի տապար - Անառակ - Եւրոպական ինքնաշարժներու վաճառանիչ մը:
- Եւրոպական նախկին հանրապետութիւն - Թանկագին քար:
- Կրկնուած բաղաձայններ - Յաւի ճիչ - Ստացական ածական - Վահան Թէքէ-Եանի երկերէն - Կոկորդի գեղձ:
- Յագենալ, բաւարարուիլ - Ամերիկացի թենիսիստ:
- Կռտած ոչխար - Ոգելից ըմպելի - Ֆրանսական գետ:
- Արական օտար անուն - Հաստ ծայրով գաւազան - Ա. Մ. Ն. ի նիւ Մեքսիքո նահանգի մայրաքաղաքը:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15



ԹԻՒ 203 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒՐՈՒՄԸ



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ



34-ՐԴ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ